# Ազգ

Azg

15 ՅՈՒԼԻՍ 2011 ՈՒՐԲԱԹ 130(4749)

ISSN: 1829-1651


## Սկսենք նորի՞ց

ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանցի համանախագահ Իգոր Պոպովը երեկ ժամանել է Ադրբեջան: Ամերիկացի համանախագահ Ռոբերտ Բրադկեն արդեն Բաքվում է:

Ինչպես «Ինտերֆաքսին» տված հարցազրույցում տեղեկացրել էր Ադրբեջանի արտգործնախարար Էլմար Մամեդյարովը, արդեն ուրբաթ համանախագահները ողջ կազմով, ֆրանսիացի համանախագահ Բեռնար Ֆասիեի ժամանմամբ, կլինեն Բաքվում, կհանդիպեն Ադրբեջանի նախագահի եւ արտգործնախարարի հետ:

Ստեղծված իրավիճակը պարտադրում է, որ համանախագահները որեւէ հայտարարություն անեն, բայց, օդանավակայանում հայտարարությամբ, համանախագահները հարցերին կարձագանքեն միայն հանդիպումներից հետո, ամենայն հավանականությամբ, հերթական հայտարարության տեսքով:

Հուլիսի 15-ին կայանալիք հանդիպումներից հետո, նույն Մամեդյարովի ներկայացմամբ, համանախագահները այցելելու են նաեւ Երեւան՝ հանդիպելու Հայաստանի նախագահի եւ արտգործնախարարի հետ:

Ա. Հ.

# Էդվարդ Նալբանդյան. Առանց ԼՂ ուղղակի մասնակցության հնարավոր չի լինի համաձայնագրի կնքումը

*Ադրբեջանը ցանկանում է... տապալել բանակցային գործընթացը*

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




Ադրբեջանական ղեկավարներն իրենք իրենց դնում են անհարմար դրության մեջ միջազգային հանրության առջեւ, ուղղակի իրենք իրենց վարկաբեկում են: Եթե փաստերը խեղաթյուրելով նրանք ակնկալում են, որ կարող են շարունակաբար մոլորության մեջ պահել իրենց հասարակական կարծիքը, ապա նույնն անել միջազգային հանրության հետ՝ ուղղակի անհնար է:

Հուլիսի 13-ին, լոնդոնյան այցելության շրջանակներում, ելույթ ունենալով Ռազմավարական ուսումնասիրությունների միջազգային ինստիտուտում՝ հայտարարել է Հայաստանի ԱԳ նախարար **Էդվարդ Նալբանդյանը**՝ ներկայացնելով Հայաստանի արտաքին քաղաքականությունը եւ պատասխանելով ներկա քաղաքագետների, լրագրողների, վերլուծաբանների եւ Լոնդոնում հավատարմագրված դիվանագետների հարցերին:

Նալբանդյանը հիշեցրել է, որ պրահյան գործընթացից խոսելուց առաջ պետք է նաեւ նշել, որ այն «հայտնվեց, քանի որ նախորդ՝ փարիզյան գործընթացը, որը եզրափակվել էր Քիվեսթյան փաստաթղթով, վերջին պահին մերժվեց, փաստորեն, տապալվեց Ադրբեջանի կողմից»: Ադրբեջանական կողմի վերջին հայտարարությունների առումով արտգործնախարարը նաեւ հիշեցրել է, որ մադրիդյան սկզբունքները կազմված էին տասնչորս կետից, ինչպես եւ տասնչորս կետից է բաղկացած 2011 թ. հունիսին ներկայացված վերջին տարբերակը:

Տես էջ 3

## Հեֆֆերնը եւ «ցեղասպանություն» բառը չի ասում

Հուլիսի 13-ին ԱՄՆ Սենատի արտաքին գործերի հանձնաժողովի առջեւ ելույթ է ունեցել Ջոն Ա. Հեֆֆերնը, ում ԱՄՆ նախագահ Օբաման առաջադրել է որպես Հայաստանում ԱՄՆ դեսպանի թեկնածուի: Այս մասին իմանում ենք Ամերիկայի հայկական համագումարի տարածած հաղորդագրությունից: Հեֆֆերնը ներկայացրել է հարցերի այն շրջանակը, որոնց ուղղությամբ աշխատելու է, եթե Հայաստանում նշանակվի դեսպան: Նա ասել է, որ շարունակելու է իր նախորդների կատարած աշխատանքը՝ ԱՄՆ-Հայաստան հարաբերությունները խորացնելու համար, շեշտել, որ վերջին տասը տարում առաջին անգամ 2010-ի ապրիլին է տեղի ունեցել երկու երկրների նախագահների հանդիպում, ԱՄՆ պետքարտուղարի այցն էլ Հայաստան վերջին 19 տարում միակն է եղել:

Պատասխանելով հանձնաժողովի նիստը նախագահողի հարցին՝ ժողովրդավարական ընտրություններ Հայաստանում ապահովելու վերաբերյալ, Հեֆֆերնը նկատել է, որ թեեւ անցյալ ընտրություններն ուղեկցվել են հանրահավաքներով եւ ձերբակալություններով, այնուամենայնիվ վերջին վեց ամիսներին, նաեւ Մարի Յովանովիչի ջանքերով, դրական փոփոխություններ են եղել, Ազատության հրապարակում հանրահավաքներ են թույլատրվում, ազատազրկվածներն ազատ են արձակվել, մարտի 1-ի դեպքերի նոր եւ լիարժեք քննություն է սկսվել. այս բոլորը Հեֆֆերնը երաշխիք է համարել նոր ընտրությունների ավելի ժողովրդավարական անցկացման համար: Հեֆֆերնի շեշտադրումներում եղել է նաեւ այն, որ չնայած ԱՄՆ-ը Եվրոպայում եւ Եվրասիայում ֆինանսական աջակցությունը կրճատել է, սակայն Հայաստանին տրամադրվող աջակցությունը պահպանվել է նույն չափով, եւ ինքը եթե նշանակվի՝ աշխատելու է Հայաստանի բիզնես- միջավայրի բարելավման եւ արեւմտյան ներդրումների ծավալների ավելացմանը նպաստելու վրա: Ընդհանրապես՝ խթանելու է արեւմտյան կողմնորոշումը:

Հեֆֆերն անդրադարձել է նաեւ ղարաբաղյան հիմնախնդրին՝ նշելով Մինսկի խմբի ձեւաչափում խաղաղ լուծմանն աջակցելը ԱՄՆ-ի վարչակազմի կողմից, ինչպես նաեւ այն աջակցությունը, որ ցուցաբերվել է Թուրքիային ու Հայաստանին՝ պատմական անցյալի հարցերին անդրադառնալու համարձակ քայլի առումով: Հեֆֆերնը խոսել է նաեւ հայ-թուրքական արձանագրությունների գործընթացը վերականգնելու անհրաժեշտության մասին: Հեֆֆերն ընդգծել է, որ ԱՄՆ-ի նախագահ Օբաման ճանաչել եւ դատապարտել է 1915 թվականի հայերի կոտորածները Օսմանյան Թուրքիայում՝ դրանք անվանելով 20-րդ դարի ամենաահարկու եղեռն:

Տես էջ 3

## Արաբական լիգան նախազգուշացնում է ԱՄՆ-ին, որ չմիջամտի Սիրիայի գործերին

Այս հայտարարությունը հուլիսի 13-ին Դամասկոսում արել է Արաբական լիգայի գլխավոր քարտուղար Նաբիլ ալ Արաբին: Նա, ըստ «Դունիա բուլթենի» կայքէջի, ԱՄՆ-ից պահանջել է վերջ տալ Սիրիայի ներքին գործերին միջամտելու փորձերին, ընդգծելով, որ նախագահ Բաշար Ասադը երկրում բարեփոխումների իրականացման երաշխիքներ է տվել իրեն: Ինչ վերաբերում է ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնի հայտարարությանը, թե Ասադը կորցրել է օրինականությունը, ապա դրա առնչությամբ Արաբական լիգայի գլխավոր քարտուղարն ասել է. «Այդ հարցը միմիայն պետք է հետաքրքրի տվյալ երկրի ժողովրդին», մատնանշելով, որ Սիրիան տարածաշրջանում հավասարակշռության եւ կայունության առանցքային գործոն է:

Հ. Զ.

## «Թուրքիայի հետ հարաբերությունների վատթարացումը չի բխում Ֆրանսիայի շահերից»

Այդ մասին, «Դունիա բուլթենի» կայքէջի վկայությամբ, Եվրոմիություն-Թուրքիա հարաբերություններին նվիրված զեկուցագրում մատնանշել է Ֆրանսիայի Սենատի եվրոպական հարցերի հանձնաժողովը, ընդգծելով Թուրքիայի աշխարհաքաղաքական նշանակությունը: Զեկուցագիրը զգուշացնում է ֆրանսիացի քաղաքական գործիչներին՝ զերծ մնալ հակաթուրքական հայտարարություններից, ավելացնելով. «Պետք է բացատրել մեր հանրային կարծիքին, որ Եվրոպայից Թուրքիայի հեռացումը ամենեւին էլ ցանկալի չէ ԵՄ-ի համար»:

Հ. Զ.

## Վաղվա «Ազգ. Մշակույթ-Հավելվածում»

Վահագն Ստամբոլցյանի հիշատակին՝ ամիսներ առաջ երգահանահարի հետ երաժշտագետ Օլյա Նուրիջանյանի հարցազրույցի գլխավոր մասերը:

Գրիգոր Աճեմյանի պատասխանը Ալեքսանդր Թոփչյանի «Թե ինչպես որդին խայտառակեց սեփական հորը» հրապարակմանը:

Պատմա-մշակութային ակնարկ ռումինահայ համայնքի պատմությանը եւ հուշարձաններին. Վարդան Դեւրիկյանի ուղեւորության տպավորությունների առաջին մասը:

Հակոբ Հակոբյանի խոհագրության շարքի հերթական մտորումներից. վերադարձ մանկություն: Առաջին մուտքը Մելգոնյան կրթարան:

Տաղանդավոր արձակագիր, վաղամեռիկ Վարդան Գրիգորյանի նորերս լույս ընծայված «Պատմվածքներ. «Հավերժական վերադարձ», «Դար կորստյան», «Մանյա այրք» գրքի առիթով Գոհար Աճեմյանի հարցազրույցը հեղինակի եղբոր՝ արձակագիր Վահագն Գրիգորյանի հետ:

Եվս այլ հրապարակումներ:

Մ. Բ.

## Պահանջում են աշխատանք, հինգ տարվա չվճարված թոշակն ու օրինական երկիր

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

**Երբ կառավարության շենքում վարչապետ Տիգրան Սարգսյանը հերթական նիստն էր վարում, դրսում մի քանի տասնյակ ցուցարարներ բողոքում էին պաշտոնյաներից եւ իշխանությունների անտարբերությունից: Կառավարության շենքի դիմաց հավաքված բնապահպանների պայքարն ուղղված էր հանքավայրերի գերշահագործմանը:**

**Հերմինե Նաղդալյան, Հովիկ Աբրահամյան, Ռոբերտ Քոչարյան, Տիգրան Արզաքանցյան, Վարդան Այվազյան, Սերոբ Տեր-Պողոսյան: Սրանք այն պաշտոնական դեմքերն են, որոնք Հայաստանում հանք են շահագործում: Նրանց ու էլի մի քանի պաշտոնյաների լուսանկարներով մեծ պաստառը ձեռքներին բնապահպանները պահանջում էին Հայաստանը չվերածել բաց հանքի:**




**Այսօր Հայաստանում կա 700 հանքավայր: Շահագործման լիցենզիա ստացել է 460-ը: «Հանքերը շահագործելու ժամկետների, պաշարների ռացիոնալ օգտագործման վերաբերյալ ռազմավարություն չկա:**

Տես էջ 2

## Մեկ տարվա ընթացքում 54.800 հայ Ռուսաստանի քաղաքացիություն է ստացել

2009-ին 54.800 հայ Ռուսաստանի քաղաքացիություն է ստացել՝ զբաղեցնելով երկրորդ տեղը ՌԴ քաղաքացիություն ստացող ազգությունների ցանկում: Տեղեկատվությունը Տնտեսական համագործակցության եւ զարգացման կազմակերպության ամենամյա զեկույցից է: Զեկույցի համաձայն՝ Ռուսաստանում քաղաքացիություն ստացող հայերի թիվն ավելացել է 2005-ից:

Համեմատության համար, եթե 2001-ին ՌԴ անձնագիր ստացել է 19.267 հայ, 2005-ին թիվը եռապատկվել է: Վերջին 9 տարվա ընթացքում ՌԴ քաղաքացիություն ստացած հայերի թիվը կազմել է 272.000: Ռուսաստան արտագաղթող մարդկանց 10 երկրների թվում առաջին հորիզոնականը զբաղեցնում են ուկրաինացիները, երկրորդ-երրորդ հորիզոնականը զբաղեցնում են Ուզբեկստանն ու Ղազախստանը: 3 միլիոն բնակչություն ունեցող Հայաստանը ցուցակի «պատվավոր» չորրորդ տեղն է զբաղեցնում:

Բացի Ռուսաստանից՝ հայերը նախընտրում են արտագաղթել Ֆրանսիա, Լեհաստան, Ավստրիա, Բելգիա, Չեխիա, Հոլանդիա եւ Հունաստան: Եթե Հունաստանում քաղաքացիություն ունեցող հայերի թիվը կազմում է 12.000, ապա լեհահայերը ամենամեծ համայնք ունեցող 3 ազգություններից մեկն են: Հայաստանցիներն ընդգրկվել են նաեւ այլ պետություններից ապաստան խնդրող 25 երկրների ցանկում: Ընդ որում՝ տարեցտարի ցուցակում Հայաստանը «առաջընթաց» է գրանցում: 2005-ին մեր երկիրը 18-րդն էր, 2009-ին՝ 16-րդը. 4 տարվա ընթացքում 22 տոկոսով ավելացել է ապաստան հայցող հայերի թիվը:

Հայերը ապաստան խնդրում են հիմնականում Ֆրանսիայից. եթե 2000-ին ապաստան խնդրած հայերի թիվը կազմել է 405, ապա 2009-ին թիվը հնգապատկվել է:

Հ.Հ.

Հ. Գ.

**ՀՀ տարածքային կառավարման նախարարության միգրացիոն գործակալության պետ Գագիկ Եգանյանի հետ խոսել չհաջողվեց: Հեռախոսը ոչ ոք չէր վերցնում:**

# «Զվարթնոցը»՝ ազատ տնտեսական գոտի

## *ՀՀ մաքսային տարածքից դուրս եւ հարկային արտոնություններով*


PHOTOLURE

Էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը եւ «Կորպորասիոն Ամերիկա Էսէյ» ընկերության կողմից «Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության գլխավոր մենեջեր Մարսելո Վենդեն համաձայնագիր ստորագրեցին «Զվարթնոց» օդանավակայանի հարակից տարածքում ազատ տնտեսական գոտի ստեղծելու նպատակով համագործակցության մասին: Ըստ համաձայնագրի, ազատ տնտեսական գոտում կիրականացվեն թարմ մրգերի եւ բանջարեղենի մանրամեծածախ առեւտուր, դրանց սառեցում, տեսակավորում, փաթեթավորում:

Համաձայնագրի ստորագրումից հետո էկոնոմիկայի նախարար **Տիգրան Դավթյանը** նշեց, որ ստեղծվել են բոլոր իրավական հիմքերը Հայաստանում տնտեսական ազատ գոտիների գործունեության համար: Զուգահեռաբար կատարվում են դրանց նախապատրաստական աշխատանքները: «Տեսանելի ապագայում կատարված քայլերը կերեւան», ասաց նախարարը, հիշատակելով արդեն իսկ գործող սառնարանային համակարգը:

Բացի «Զվարթնոց» օդանավակայանի ազատ տնտեսական գոտուց, եւս մեկ ազատ տնտեսական գոտու ստեղծման ուղղությամբ աշխատանքներ են տարվում՝ «Մարս» գործարանում, որը կլինի արդյունաբերական ուղղվածության: Բանակցություններ են ընթանում ռուսական «Սինտրոնիկս» ընկերության հետ: Տիգրան Դավթյանը տեղեկացրեց նաեւ, որ երրորդ ազատ տնտեսական գոտին կլինի տեղեկատվական եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտի համար: Կարեւորելով ազատ տնտեսական գոտիների ստեղծումը, էկոնոմիկայի նախարարն այն կարծիքը հայտնեց, որ «սա նոր հնարավորություն է, նոր ձեւաչափ մեր տնտեսության զարգացման համար»:

Էկոնոմիկայի նախարարի խոսքով, ազատ տնտեսական գոտիները համարվելու են ՀՀ մաքսային տարածքից դուրս տարածք եւ ունենալու են հարկային արտոնություններ: Դրանով խթանվելու է կապիտալի ներհոսքը Հայաստան: Ակնկալվում են ներդրումներ օտարերկրյա ընկերությունների, այդ թվում՝ այդ գոտիների կառավարիչ ընկերությունների կողմից:

«Արմենիա միջազգային օդանավակայաններ» ընկերության գլխավոր մենեջեր **Մարսելո Վենդեն** ընդգծեց, որ իր ներկայացրած ընկերությունը շատ հետաքրքրված է այս նախագծով: Նա տեղեկացրեց, որ օդանավակայանի նոր համալիրի շինարարության ավարտից հետո հաջորդ քայլը կլինի «Զվարթնոցը» դարձնել փոխադրումների կենտրոն: Նա այն տեսակետը հայտնեց, որ ազատ տնտեսական գոտիների ստեղծմամբ հնարավորություններ են առաջանում ընկերությունների համար իրենց արտադրությունը այստեղ կազմակերպելու:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

# Կոնգրեսական Ադամ Շիֆի նամակը դատախազին

Հուլիսի 11-ին, ըստ Վաշինգտոնից ստացված հաղորդագրության, կոնգրեսական Ադամ Շիֆը նամակ է հղել գլխավոր դատախազ Էրիկ Հոլդերին՝ հայցելով օգտագործել բոլոր հնարավոր միջոցները՝ վերաձերբակալելու համար 19-ամյա Մայք Եփրեմյանի սպանության մեջ կասկածվող Զարեհ Մանճիքյանին:

Դեպքը տեղի է ունեցել 2009-ի նոյեմբերին, Հյուսիսային Հոլիվուդի ավտոկայանատեղիներից մեկում տեղի ունեցած վեճից հետո: Հետաքննությունը վարել է Լոս Անջելեսի ոստիկանական բաժանմունքը: Տասնութամսյա որոնումներից հետո կասկածյալին հայտնաբերել են Պուերտո Ռիկոյում: 2011-ի մայիսին «Յու.Էս. Մարշալզ Սերվիսի» աշխատակիցները կալանավորել են նրան, բայց մինչեւ Լոս Անջելեսի ոստիկանության բաժանմունքին նրան հանձնելը, տեղի դատարանը չնչին մի գումարի դիմաց ազատ է արձակել նրան: Ներկայումս նրա գտնվելու վայրը անհայտ է:

«Այս հարցը շատ է մտահոգում ինձ եւ իմ ընտրազանգվածին: Հայցում եմ ձեր աջակցությունը՝ վերաձերբակալելու հանցագործին, որտեղ էլ նա գտնվելիս լինի», ասված է Շիֆի նամակում:

Հ. Ծ.

# «Խոսրովի անտառը»՝ մոնիտորինգի տակ

**Կառավարությունը երեկ հաստատեց «Խոսրովի անտառ» պետական արգելոցի պատմամշակութային հուշարձանների վերականգնման եւ օգտագործման ծրագիրը, որով նախատեսվում է մոնիտորինգի ենթարկել տարածքում գտնվող ավելի քան 300 հուշարձանները՝ դրանք վերականգնելու եւ բարեկարգելու նպատակով: Վարչապետ Տիգրան Սարգսյանն այս առթիվ նշեց, որ ընդունված փաստաթղթով փարատվում են բնապահպանական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների մտահոգությունները, որոնք վերաբերում են Խոսրովի արգելոցի պահպանման եւ զարգացման հիմնախնդիրներին:**

Ա. Ս.

# Նոր ուսումնական տարվանից կդասավանդվի «շախմատ»

**Հայաստանի դպրոցների երկրորդ, երրորդ, չորրորդ դասարաններում նոր ուսումնական տարվանից կդասավանդվի «շախմատ» առարկան: Ըստ կառավարության երեկ ընդունած որոշման՝ շախմատի դասավանդման համար նախատեսվել է շաբաթական երկուական դասաժամ:**

Ա. Ս.

# «Սաուրի» հետ նոր պայմանագիր

**Ջրային տնտեսության պետական կոմիտեին կառավարությունը երեկ լիազորեց բանակցել «Սաուր Ս.Ա.Ս» ֆրանսիական կազմակերպության հետ՝ մինչեւ 2013 թ. դեկտեմբերի 31-ը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ գործադիր մարմնի լիազորությունները մասնավոր կառավարչին փոխանցելու կառավարման պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու կամ այդ կազմակերպության հետ կառավարման նոր պայմանագիր կնքելու համար՝ նախատեսելով պայմանագրի ժամկետը լրանալուց հետո եւս մեկ տարով երկարաձգելու հնարավորություն: Որոշումն արտացոլում է Համաշխարհային բանկի հետ անցկացված համատեղ քննարկման արդյունքը, ըստ որի իբրեւ նպատակահարմար տարբերակ, առաջարկվում է մինչեւ 2013-ի վերջը շարունակել «Հայջրմուղկոյուղու» կառավարման պայմանագիրը եւ վարձակալության պայմանագրին անցնել 2014-ից:**

Ա. Ս.

# Միայն հրավերի դեպքում կարող են մուտք գործել Հայաստան

**Հայաստանի կառավարությունը հաստատել է այն պետությունների ցանկը, որոնց քաղաքացիները Հայաստան մուտքի վիզա ստանալու համար կարող են դիմել միայն օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններ եւ հյուպատոսական հիմնարկներ եւ միայն հրավերի հիման վրա: Այդ պետությունների ցանկ են մտցվել Կոտ դ՛ Իվուարը, Գանան, Սիեռա Լեոնեն, Ալժիրը, Մարոկկոն, Լիբիան, Մավրիտանիան եւ Թունիսը, որոնց քաղաքացիները վերջին ժամանակներս ավելի ու ավելի հաճախ են փորձում օգտագործել Հայաստանի տարածքն իբրեւ Եվրոպա մեկնելու տարանցիկ գոտի: Որոշումը նպատակ ունի առավել վերահսկելի դարձնել այդ պետությունների քաղաքացիների եւ ճամփորդական փաստաթղթեր ունեցող անձանց մուտքը Հայաստանի Հանրապետություն:**

Ա. Ս.

# Լոռու մարզպետն ազատվել է պաշտոնից

**Կառավարության որոշմամբ Լոռու մարզպետ Արամ Քոչարյանը հուլիսի 12-ից, իր դիմումի համաձայն ազատվել է պաշտոնից:**

Ա. Ս.

# Պահանջում են աշխատանք, հինգ տարվա չվճարված թոշակն ու օրինական երկիր

**1-ին էջից**

**Առաջարկություններ ենք ներկայացրել կառավարությանը, բնապահպանության նախարարությանն ու Համաշխարհային բանկին, սակայն հաշվի չեն առնվել եւ ընդերքի մասին մշակված օրենսգիրքը միտված է հարմար միջավայր ստեղծելու հանքարդյունաբերությանը: Առանց դրա էլ հանքարդյունաբերողները արտոնյալ իրավիճակում են: Հանքերի շահագործումից առաջացած պոչանքների դիմաց հանքարդյունաբերողը չի վճարում:**

**Բնապահպան Կարինե Դանիելյանն էլ առաջարկում է հինգ տարով արգելել նոր հանքերի շահագործումը: Մինչ այդ անհրաժեշտ է լուրջ ուսումնասիրություն: «Երկրի դժբախտությունն այն է, որ մի խումբ օլիգարխներ գերհարստացման համար խժռում են երկիրը: Տաթեւում հսկայական գումար ծախսվեց, հիմա եկեղեցու հարեւանությամբ երկաթի եւ ոսկու հանք են շահագործում: Եթե Ամուլսարի հանքը օգտագործվի, կհարվածի Ջերմուկին որպես զբոսաշրջային եւ առողջարանային կենտրոնի: Կկեղտոտվեն հանքաջրերը: Հրազդանում շահագործվող երկաթի հանքը վնասում է Հրազդան քաղաքին, Հրազդան գետին եւ Երեւանին: Մայրաքաղաք մտնող խմելու ջրերի 40 տոկոսը գալիս է Հրազդանից»**

**Կառավարության շենքից դուրս գալիս բնապահպանության նախարար Արամ Հարությունյանը շտապ քայլերով մոտենում էր ծառայողական մեքենային: Թեպետ նախարարը ցանկանում էր շրջանցել ցուցարար-ակտիվիստներին, սակայն լրագրողների հարցին, թե ինչու է փախչում, նախարարը վիրավորված կանգ առավ. «Չեմ փախչում, կպատասխանեմ ձեր հարցերին»:**


ՖՈՏՈԼՈՒՐ

**Նրա պատասխանները՝ հանքերի շահագործման վերաբերյալ, մեղմ ասած, չէին համապատասխանում իրականությանը: «Ընդերքը պետք է շահագործվի, սակայն շրջակա միջավայրին հասցվող վնասներն իջեցվեն ամենացածր աստիճանին»: Սյունիքի մարզում, Ալավերդի եւ Ախթալա քաղաքներում կատարված հետազոտությունները պարզել են, որ հանքերը շահագործվում են՝ հսկայական վնաս հասցնելով շրջակա միջավայրին: Մասնավորապես թափոնները լցվում են գետերը: Թունավորված ոռոգման ջուրը հողի միջոցով հասնում է բանջարեղենին, եւ վերոնշյալ շրջաններում աճեցված բերքը վնասակար է առողջությանը: «Մտավախություն չունե՞ք, որ նոր հանքերի շահագործմամբ էլ նախկին փորձը կրկնվի», մեր հարցին նախարարը պատասխանեց. «Եթե լինեն, ապա խախտումների համար համապատասխան տուգանքի կենթարկվեն», ու շտապ նստեց մեքենան:**

**«Քաղցր դեղձ», «Լավ ծիրան», «Մի քիչ խփած է, էժան կտամ», «Ինչքա՞ն ես առնում, ասա՝ կիջնեմ»: Արդեն 7 ամիս անգործության մատնված բացօթյա առեւտրով զբաղվող առեւտրականներն էլ «մինիշուկա» էին պատրաստել քաղաքապետ Կարեն Կարապետյանի համար:**

**Նրանց խոսքերով՝ քաղաքապետի խոստացած մինիշուկաները մինչեւ հիմա պատրաստ չեն, իսկ մնացած շուկաներում վարձը շատ թանկ է: Բացօթյա առեւտրով զբաղվող երկու տասնյակ առեւտրականները մոտ երկու ժամ սպասում էին, որ կառավարության նիստից հետո քաղաքապետը մոտենա ու լսի նրանց խնդրի մասին: Կարապետյանը երեւանցիների պահանջին չարձագանքեց: «Հաջորդ անգամ քաղաքապետարանի դիմաց առեւտուր կանենք», խոստացան առեւտրականները:**

**Նրանց հարեւանությամբ հաշմանդամ օդաչուներն էին: Այսօր հանրապետությունում գրանցված է շուրջ 100 հաշմանդամ օդաչու: Դրանք այն օդաչուներն են, որոնք մասնագիտական գործունեության ժամանակ վիրավորվել են ու հիվանդություն ձեռք բերել: Ցուցարարներից մեկը լսողական խնդիրներ ուներ, մյուսը՝ ոտքի, երրորդը՝ գլխի: Նրանք ձեռքերին պահել էին նախագահին եւ վարչապետին ուղղված պաստառներ՝ պահանջելով վճարել օրենքով նախատեսված փոխհատուցումը: Վանիկ Մայիլյանը մեկն է հաշմանդամ օդաչուներից: Մասնագիտական գործունեության ժամանակ վնասել է գլուխն ու վիրահատությունից հետո ստացել երկրորդ կարգի հաշմանդամության թուղթ: «Արդեն 5 տարի չենք ստացել ամսական մեզ հասանելիք 48.000 դրամ թոշակը: «Զվարթնոցը» հրաժարվում է վճարել», ասում է ալեհեր Վանիկ պապիկն ու հավելում, որ եթե օդանավակայանը հրաժարվում է, ապա պետությունը կամ պետք է ստիպի վճարել, կամ էլ ինքը վճարի: «Չէ՞ որ այդ օրենքն իրենք են գրել»:**

**Խաղաղ պայմաններում մահացած զինվորների մայրերն ամեն հինգշաբթի այստեղ են: Սեւազգեստ մայրերը ձեռքերին պահում են որդիների նկարներն ու լուռ հայացքով պահանջում պատասխան. ինչո՞ւ են իրենց որդիներին բանակում սպանել:**

**«Ազգ» օրաթերթը բազմիցս անդրադարձել է խաղաղ պայմաններում մահացած զինվորների խնդրին: Անկախ դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ տղաներին ոմանց սպանել են, մինչդեռ պաշտոնական վարկածով՝ ինքնասպանություն են գործել: Տարիներ շարունակ մայրերը կանգնում են կառավարության շենքի դիմաց՝ հույսով, որ Տիգրան Սարգսյանը կամ Սեյրան Օհանյանը կլսեն նրանց ու կօգնեն: Սակայն պաշտոնյաների լռությունն ու անտարբերությունը նրանց հասցրել են այն հոգեվիճակին, որ այլեւս չեն պահանջում, նրանք անիծում են. «Գուցե այս ցավը, որ նրանք էլ տեսնեն, կհասկանան մեզ», ասում են սեւազգեստ մայրերը:**

**Նախարար Օհանյանը երեկ էլ չխախտեց ձեւավորված վատ ավանդույթն ու չարձագանքեց մայրերի պահանջին:**

# Գարեգին Ազարյանը՝ նոր ԿԸՀ-ի նախագահ

Հայաստանի Կենտրոնական ընտրական նոր հանձնաժողովը երեկ գումարեց իր անդրանիկ նիստը, եւ, ո՞վ էր կասկածում, հանձնաժողովի նախագահ ընտրեց Գարեգին Ազարյանին, այսինքն՝ նախկին ԿԸՀ նախագահին: Նախագահի տեղակալ է ընտրվել Լաուրա Գալստյանը, քարտուղար՝ Արմեն Սմբատյանը:

Ս. Խ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960

Լրագրողների սենեակ / հեռ 581841

Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483

*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն* / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատւութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ադրբեջանի ականջը քաշող է պետք, եւ հնարավորինս արագ

**«Ազգն»** արդեն ներկայացրել է Ադրբեջանում դիրքորոշման արտահայտման հարցում տիրող խառնաշփոթ իրավիճակը: Եվ երբ Ալիեւ կրտսերի ու մանր-մունր չինովնիկների խոսքի անհամապատասխանությանը, որ առավելապես վկայում է ոչ այնքան խուճապի, որքան հետքայլ անելու հստակ իրավիճակի մասին, ավելացնենք նաեւ «Ինտերֆաքս» գործակալության հարցազրույցում Ադրբեջանի ԱԳ նախարար Էլմար Մամեդյարովի ոչ թե հակասող, այլ տրամագծորեն հակառակ դատողությունները, ապա եզրակացությունը մեկն է. հունիսի 24-ին Կազանում տեղի ունեցած եռակողմ Հայաստան-Ադրբեջան-Ռուսաստան նախագահների մակարդակով հանդիպման անարդյունք լինելու մեղավորն Ադրբեջանն է, որ բացահայտ ցանկություն է հայտնում «թաղելու» մադրիդյան սկզբունքների տեսքով ձեւակերպում ստացած, 2004-ից մեկնարկած պրահյան գործընթացը:

Չհամաձայնելով, թե Կազանի հանդիպումն անարդյունք էր, Մամեդյարովը հայտարարել է, թե «մերձեցում եղավ, նաեւ Հայաստանն ու Ադրբեջանը պետք է շարունակեն հաջորդ բանակցային փուլին», հայտարարել է Մամեդյարովը` հակասելով ցայսօր ինչպես համանախագահների, այնպես էլ հենց Ադրբեջանի հնչեցրած բոլոր տեսակի դիրքորոշումներին:

Մամեդյարովի ասածները որեւէ կերպ չեն տեղավորվում նախ այն հիմնական տրամաբանության մեջ, որ առանց գեթ մեկ սկզբունքի համաձայնեցման` մադրիդյան սկզբունքները, որոնցից համաձայնեցվածների առումով Մամեդյարովն առաջարկում է աշխատել, չեն կարող համարվել համաձայնեցված: Մյուս կողմից, Լեռնային Ղարաբաղի ուղղակի մասնակցությունը բանակցություններին ենթադրվում է հենց սկզբունքների համաձայնեցումից հետո, թեեւ առողջ տրամաբանությունը պարտադրում է ԼՂՀ մասնակցություն արդեն վաղուց:

Ընդունելով, որ կազանյան հանդիպմանը ադրբեջանական կողմից ներկայացվել են առաջարկներ` «ոչ տասը, այլ պակաս», Մամեդյարովն ակնհայտ ստի է գնացել` համանախագահող երկրների նախագահներին ստախոսի կարգավիճակ տալու փորձ անելով. «Կազանում որեւէ հռչակագրի ստորագրում չէր նախատեսվում եւ չէր քննարկվում... անգամ հիմնարար սկզբունքների ստորագրում չէր նախատեսվում»: Թե ինչպես է մեկնաբանում Մամեդյարովը հիմնարար սկզբունքները` բազմիցս կրկնված իրողություն է, միայն հարկ է ավելացնել, որ ստելու հարցում լկտիության է հասնում Ադրբեջանի ԱԳ նախարարը, երբ հայտարարում է. «Ես ենթադրում եմ, որ ղարաբաղցի հայերը կքվեարկեն Ադրբեջանի կազմում մնալու համար»: Ընդ որում, Մամեդյարովը կարծում է, որ ղարաբաղցիներին կհամոզեն, թե ինչ «չքնաղ երկիր» է Ադրբեջանը:

Ադրբեջանը մերժում է մադրիդյան սկզբունքները, տապալելով բանակցային գործընթացը, այդպիսով եւս մեկ անգամ ապացուցելով, որ հենց այս կողմի ապակառուցողական գործողություններն ու մոտեցումն էլ գրեթե միշտ առիթ ու այդուհետեւ նաեւ պատճառ են դառնում տապալելու տարիների ջանքերը, որ ներդնում են ոչ միայն հայկական կողմը, այլեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահները` ի դեմս համանախագահող երկրների ամենաբարձր մակարդակի ներկայացուցիչների: բանակցություններն առանց հիստերիայի, PR-ի, աշխատեն մոտեցնել դիրքորոշումները»: «Ադրբեջանը մնում է նույն դիրքորոշմանը, ինչ 2010-ին Սոչիում: Մենք պատրաստ ենք սկսել խաղաղ համաձայնագրի տեքստի մշակումը` այն ամենի ընբռնումից, ինչ արդեն քննարկվել է... Մենք հասկանում էինք, որ կան չհամաձայնեցված տարրեր, բայց ցանկացած դեպքում դրանք պետք է արտացոլվեն խաղաղ պայմանագրում, եւ եթե բարի կամք իսկապես կա, ապա եկեք միանգամից աշխատենք դրա վրա` չսպասելով հիմնարար սկզբունքների ուղղությամբ

Այս ամենի համատեքստում հետաքրքրական է, որ երեկ Ադրբեջանում նշում էին «Հեյդար Ալիեւի` 1969թ. հուլիսի 14-ին Ադրբեջանի ղեկավար նշանակվելու» տարեդարձը, աբսուրդի հասնող սուլթանական իրողության դրսեւորում, որի ֆոնին ադրբեջանական պաշտոնական տեսակետը որպես քաղաքացիական միտք ներկայացնող որոշ քաղաքագետներ անգամ հայտարարել են «Հայաստանը հրթիռակոծելու անհրաժեշտության մասին, եթե Հայաստանը արկածախնդրության գնա», իբր արկածախնդրություն Ադրբեջանից լավ որեւէ մեկը կարող է դրսեւորել:

Ռազմատենչ հայտարարություններ շատ են արվել, արվում են ու դեռ կարվեն` ելնելով ներքին լսարանը ենթակա պահելու անհրաժեշտությունից, բայց ակնհայտ է, որ Ադրբեջանի` այս մի գործընթացն էլ տապալելու ակնհայտ ցանկությունը պետք է արժանանա միջազգային հանրության հստակ գնահատականին, այնպես, որ այսուհետեւ տարիների աշխատանքը ջուրը լցնելուց առաջ Ադրբեջանում մի երկար մտածեն, ոչ թե մեկը մեկից անտեղյակ դուրս տան` ինչ հարմար են գտնում:

**Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

# Էդվարդ Նալբանդյան. Առանց ԼՂ ուղղակի մասնակցության հնարավոր չի լինի համաձայնագրի կնքումը

*1-ին էջից*

2007 թ. նոյեմբերից 2011 թ. հունիսն ընկած ժամանակահատվածում ներկայացվել են մի շարք աշխատանքային տարբերակներ: Դրանցից ոչ մեկին` առաջինից մինչեւ վերջինը, ըստ Նալբանդյանի, Ադրբեջանը համաձայնություն չի տվել: Առավելագույնը հայտարարվել է, որ ինչ-որ տարբերակ կարող են ընդունել, այն էլ որոշակի վերապահումներով: «Դա կրկնվեց նաեւ վերջին տարվա ընթացքում: Հայաստանը միանշանակ պատասխան է տվել 2010 թ. հունիսյան, հոկտեմբերյան, դեկտեմբերյան եւ 2011 թ. հունիսյան տարբերակներին: Ադրբեջանն ամեն անգամ բազմաթիվ փոփոխություններ էր առաջարկում` առնվազն տասը փոփոխություն 2011 թ. մարտին Սոչիում, երբ քննարկվում էր 2010 թ. դեկտեմբերյան տարբերակը, եւ նորից տասը փոփոխություն վերջին հանդիպման ժամանակ` 2011 թ. հունիսին Կազանում»:

Ադրբեջանի ռազմատենչության պահպանման ու ավելացման համատեքստում էլ Նալբանդյանը հիշեցրել է ԵԱՀԿ Մինսկի խմբի երեք համանախագահող երկրների նախագահների դովիլյան հայտարարությունը, որում ժողովուրդներին խաղաղության, այլ ոչ թե պատերազմի պատրաստելու անհրաժեշտության մասին էր խոսվում: «Ակնհայտ է, որ դա ուղղված է Ադրբեջանին: Իսկ ինչպե՞ս պատասխանեց Ադրբեջանը: Նոր պատերազմի սպառնալիքով` ռազմական շքերթով, սուր ճոճելով, գլուխ գովելով, որ վերջին 7 տարում 20 անգամ ավելացրել է ռազմական բյուջեն, Հայաստանի նկատմամբ տարածքային նկրտումներով: Չեմ կարծում, որ նման պատասխանի համար կարելի է գլուխ շոյել»:

Դովիլյան հայտարարությունը հացեագրված էր «հակամարտության բոլոր կողմերին», ըստ Նալբանդյանի, «եւ դրա մասին ասվում է ոչ մեկ անգամ: Ինչո՞ւ: Քանի որ ակնհայտ է, որ առանց ԼՂ կողմից հիմնարար սկզբունքների հավանությանը հնարավոր չէ անցնել խաղաղ համաձայնագրի մշակմանը, եւ առանց բանակցություններին ԼՂ ուղղակի մասնակցության հնարավոր չի լինի համաձայնագրի կնքումը, հիմնախնդրի հանգուցալուծումը»:

«Դովիլյան հայտարարության մեջ նշվում է ստատուս քվոյի պահպանման անընդունելիության մասին: Դրան հասնելու համար հարկավոր է ամբողջապես իրագործել այն երեք սկզբունքները եւ վեց տարրերը, որոնց մասին ասում են համանախագահ երկրների ղեկավարներն իրենց հայտարարությունների մեջ: Հիշեցնեմ, որ այնտեղ կա շատ կարեւոր մի տարր, որը ադրբեջանական կողմը փորձում է մոռացության տալ կամ առնվազն հետին պլան մղել: Դա ԼՂ բնակչության իրավունքն է` որոշել ԼՂ վերջնական կարգավիճակը պարտադիր իրավական ուժ ունեցող կամարտահայտության միջոցով», ասել է Նալբանդյանը:

Արձագանքելով վերջերս Բաքվից հնչած Ղարաբաղի ապագա կարգավիճակի վերաբերյալ խեղաթյուրմանը` Նալբանդյանն ընդգծել է, որ մինչեւ վերջնական կարգավիճակի որոշումը ԼՂ-ն ունենալու է միջանկյալ կարգավիճակ, որը պետք է միջազգայնորեն ամրագրվի, եւ դա հենց այն է, ինչն առաջարկել են եռանախագահները եւ ինչին համաձայնել է Ադրբեջանի ղեկավարը 2009 թ. մայիսին Պրահայում, առ այն, որ ԼՂ միջանկյալ կարգավիճակ նշանակում է status quo plus, այսինքն այն ամենն, ինչ այսօր ունի Լեռնային Ղարաբաղը` գումարած այդ կարգավիճակի միջազգային ճանաչում:

Մեկնաբանելով Ադրբեջանի ԱԳ նախարարի հայտարարությունն առ այն, որ իմաստ չկա ժամանակ ծախսելու հիմնարար սկզբունքների համաձայնեցման վրա, եւ ճիշտ կլինի անցնել միանգամից խաղաղ պայմանագրի մշակմանը` Էդվարդ Նալբանդյանը հիշեցրել է, որ դա ադրբեջանական հին երգի, հին կրկներգ է: Ադրբեջանական ղեկավարության կողմից արդեն երկու տարի հնչող այդ գաղափարի վերաբերյալ եռանախագահները հայտնել են իրենց կարծիքը, որ եթե Ադրբեջանը չի կարող պայմանավորվել հիմնարար սկզբունքների շուրջը, ապա ինչպե՞ս կարելի է խոսել խաղաղ համաձայնագրի մշակման մասին:

Նալբանդյանը նշել է, որ Ադրբեջանի այս մոտեցումը ակնհայտ ցանկություն է` ձերբազատվելու եռանախագահների ներկայացրած հիմնարար սկզբունքներից եւ փաստորեն տապալելու վերջին տարիների բանակցային գործընթացը:

## ՀՈՒԼԻՍԻ 14

# Շնորհավորանքներ Ֆրանսիայի ազգային տոնի առթիվ

**Ֆրանսիայի Ազգային տոնի առթիվ նախագահ Սարգսյանը երեկ այցելել է Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատուն, շնորհավորել դեսպանատան աշխատակազմին, մաղթել բարեկամ Ֆրանսիային հետագա զարգացում եւ բարգավաճում, իսկ նրա ժողովրդին` բարօրություն: Նախագահը նշել է, որ Ֆրանսիայի հետ հարաբերությունները մեր երկրի արտաքին քաղաքականության մեջ առանձնահատուկ դերակատարություն ունեն, եւ Հայաստանը շահագրգռված է Ֆրանսիայի հետ խորացնելու հարաբերությունները բոլոր մակարդակներում: Նախագահ Սարգսյանը նաեւ շնորհավորական ուղերձ է հղել Ֆրանսիայի Հանրապետության նախագահ Նիկոլա Սարկոզիին Ֆրանսիայի Հանրապետության ազգային տոնի առթիվ` նշելով, որ Ֆրանսիայի հետ հարաբերություններն առանձնահատուկ նշանակություն ունեն Հայաստանի համար, ինչը պայմանավորված է թե՛ պատմական կապերով, թե՛ մեր ժողովուրդների միջեւ առկա բարեկամությամբ, թե՛ միջազգային ասպարեզում Ֆրանսիայի վարած հետեւողական եւ սկզբունքային քաղաքականությամբ եւ թե՛, իհարկե, երկու երկրների միջեւ յուրատեսակ կամուրջ հանդիսացող ֆրանսահայ ստվար համայնքի առկայությամբ: Նախագահը նաեւ շնորհակալություն է հայտնել Սարկոզիին` որպես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրի ղեկավարի, հետեւողական ջանքերի համար, որոնք ուղղված են Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման հիմնախնդրի լուծմանն ու հարավկովկասյան տարածաշրջանում տեւական խաղաղության հաստատմանը:**

**Երեկ Հայաստանում Ֆրանսիայի դեսպանատուն է այցելել նաեւ վարչապետ Տիգրան Սարգսյանը` նույնպես դեսպանատան աշխատակազմին շնորհավորելով տոնի առթիվ: Նա ասել է, որ Ֆրանսիայի ազգային տոնն այն բացառիկ տոներից է, որ նշվում է ոչ միայն Ֆրանսիայում, այլեւ տարբեր պետություններում, հաշվի առնելով այն մեծ խորհուրդը, որ նա իր մեջ կրում է: Անդրադառնալով հայ-ֆրանսիական հարաբերություններին, վարչապետը նշել է, որ դրանք ունեն խոր արմատներ: Սակայն ավելի կարեւոր է հայ-ֆրանսիական բարեկամական հարաբերությունների ապագան: Վարչապետի համոզմամբ` մեր երիտասարդ պետությունը, որ այս տարի նշելու է իր անկախության 20-ամյակը, Ֆրանսիայի հետ համագործակցության շնորհիվ ունենալու է նորանոր ձեռքբերումներ տնտեսական, սոցիալական, քաղաքական բնագավառներում:**

**Ս. Խ.**

# Աշտարակի կախովի կամուրջը բարեկարգվել է



**Քասախ գետի ձախ եւ աջ ափերը միմյանց միացնող միակ հետիոտնային կախովի կամուրջը բարեկարգվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի, ՀՀԿ երիտասարդական կազմակերպության եւ Աշտարակի քաղաքապետարանի ջանքերով:**

**Կամուրջը, որ 1970-ականներից չէր վերանորոգվել, զբոսաշրջության համար կարեւոր նշանակություն ունեցող վայրերից է: Հենց այդտեղից է գեղեցիկ տեսարան բացվում դեպի Սուրբ Սարգիս, Ծիրանավոր, Սպիտակավոր եկեղեցիները, Աշտարակի ջրաղացն ու հին կամուրջը:**

**Բարեկարգման աշխատանքների շրջանակներում երիտասարդները ներկել են կամուրջը, տեղադրել ծաղկամաններ: Վերականգնվել է կամրջի ողջ երկայնքի լուսավորության համակարգը:**

**Հ. Հ.**

# Հեֆֆերնը եւ «ցեղասպանություն» բառը չի ասում

*1-ին էջից*

**Հեֆֆերնի ելույթից հետո նրան հարցեր են ուղղել սենատորները: Նրանցից Ռոբերտ Մենենդեսը հարցը սուր է դրել` նշելով, որ պետդեպարտամենտը ցեղասպանության վերաբերյալ բազմաթիվ հայտարարություններ է արել, ու թեեւ ցեղասպանության իրողության բազմաթիվ փաստերի է տիրապետում, սակայն «ցեղասպանություն» բառը ԱՄՆ-ում չեն ուզում արտասանել: Հեֆֆերնը փաստորեն ինքն էլ այդ բառը չի ասել` ի պատասխան նկատելով, որ այդպիսի բնորոշումը (ամենաահարկու եղեռն) վարչակազմի քաղաքական որոշումն էր, որը կրկնել է նաեւ նախագահ Օբաման իր ապրիլքսանչորսյան ելույթում: Մենենդեսն իր խոսքում ԱՄՆ վարչակազմի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ բնորոշեց որպես խոցելի: Հանձնաժողովը դեռ մի քանի օր ունի` Հեֆֆերնին դեսպան նշանակելու առաջարկի վերաբերյալ որոշում կայացնելու համար:**

**Ի դեպ, Յովանովիչի մասով Հեֆֆերնի ասածն արդեն ոչ միանշանակ արձագանքներ ունի Հայաստանում, քանի որ եթե հիշում եք` մամուլը բազմիցս գրել է, որ ԱՄՆ-ի վերջին դեսպան Մարի Յովանովիչը ընդդիմության եւ իշխանության հարաբերությունները կարգավորելու միջնորդի դերն էր ստանձնել, եւ մեկնաբանություններ էին հնչում, որ տիկինը խառնվում է Հայաստանի ներքին կյանքին:**

**Հիշեցնենք` Հեֆֆերնի թեկնածությունը Սենատին առաջարկել է Օբաման, բայց մինչեւ Սենատում հաստատվելը այդ առաջարկը պետք է ստանա արտաքին հարաբերությունների հանձնաժողովի դրական եզրակացությունը: Սակայն, փաստորեն, Հեֆֆերնը չի արտասանել «ցեղասպանություն» բառը, ինչպես որ ժամանակին Հոգլանդը չարտասանեց, ու նրա թեկնածությունը հայկական շրջանակները տորպեդահարեցին այնքան, մինչեւ Հոգլանդի թեկնածությունը Սենատը չհաստատեց: Տեսնենք, թե ինչ կլինի այս անգամ:**

**Էլի հիշեցնենք, որ Ամերիկայի հայկական համագումարն էր ավելի վաղ հայտարարություն տարածել` հույս հայտնելով, որ Ջոն Հեֆֆերնի հաստատման հարցում Սենատը խստապահանջ կլինի, մանավանդ նրա կենսագրության այն տվյալները նշելով, ըստ որոնց Հեֆֆերնը թուրքանպաստ դեր է ունեցել տարբեր հարցերում, եղել է թուրքամետ կոնգրեսական Դոուգ Բերեութերի օգնականը, իսկ նրա «շեֆը» քվեարկում էր հակահայկական նախագծերի օգտին, ինչպես նաեւ դեմ էր արտահայտվել Թուրքիային ԱՄՆ-ի ցուցաբերած ռազմական օժանդակությանը կրճատելուն:**

**Ս. Խ.**

ԱԶԳ

## Տարաբնույթ

# Մայր հայրենիք վերադարձի երազներով...

*Ֆեդերցովկայի կրոնափոխ համշենահայերի (հեմշիլ) մոտ*

Ղրղզստանի կրոնափոխ համշենահայերի (հեմշիլ) ղեկավար Ռուսլան Կարապաչակովի այցը Հայաստան եւ Արցախ, շուրջ երկու հարյուր երիցս բռնագաղթված Օշի համշենցիների վերադարձը ազատագրված արցախյան լեռնաշխարհ՝ լայն արձագանք գտավ հայկական սփյուռքով մեկ: Բեյրութի «Դիտակ» ամսագրի ու Կանադայի «Գեղարդ» համացանցային ամսագրի նախաձեռնությամբ ծրագրեցինք այցելել Ռուսաստանի քրիստոնյա եւ կրոնափոխ համշենահայերին, որոնց Ստալինը, Մալենկովն ու Բերիան որպես «կասկածելի» ժողովրդի, աքսորել էին Ղրղզստանի խուլ գյուղերը ու Ղազախստան: Մեր ծրագիրն էր այցելել նաեւ 3000-ամյա Օշ քաղաքը եւ Ղազախստանի համշենահայ բնակավայրերը, որտեղ բազմիցս եղել էր վաստակաշատ գիտնական եւ համշենագետ Սերգեյ Վարդանյանը՝ 1984, 1987, 1990 թթ.-ին, անհատական փորձ անելով որոշ համշենահայերի վերաբնակեցնել Խորհրդային Հայաստանում, որին դեմ էր կանգնել այն ժամանակվա Հայաստանի ղեկավարությունը:

Բեյրութից «վերադառնալով» Մոսկվա, մեզ դիմավորում ու կարճատեւ հանդիպում են կազմակերպում համշենահայերի փրկությանը նվիրված, ծագումով մշեցի, արցախցի, «Համշեն» երիտասարդական միության անդամ Գեւորգ Մխիթարյանը ու Գարիկ Գայանյանը, հանրաճանաչ տնտեսագետ, Աբխազիայում ծնված պրոֆ. Սերգեյ Գալինչյանի հետ: Պետք է նշեմ, որ բազմաթիվ «մեղրածոր» խոստումները նեցուկ կանգնելու մեր առաքելությանը այսպես կոչված «Արեւմտահայերի կոնգրես»-ի որոշ անդամների կողմից՝ մնում է օդում... եւ հայ ազգի արժանավոր զավակ Գեւորգ Մխիթարյանի հետ ճանապարհ ենք ընկնում դեպի 1200 կմ հեռավորության վրա գտնվող, Ռուսաստանի հարավարեւելյան տարածաշրջանում կայք հաստատած Կամենն-Շախտինսկ քաղաքի մոտ գտնվող Ֆեդերցովկա գյուղը:



Կրոնափոխ համշենահայերի հարսանիք Ֆեդերցովկայում

Առաջին իսկ վայրկյաններից շեկ ու կապուտաչյա, համշենահայերեն, ռուսերեն եւ մի քիչ էլ թուրքերեն խոսող մեր «հոմշենցի» հյուրընկալները, որոնք վարում էին «Ֆորդտրանզիտ» երթուղայինը, աչքի են ընկնում չտեսնված հյուրասիրությամբ եւ նրանց սկզբնական կասկածները հեռավոր Լիբանանից եկած ժուռնալիստի վերաբերյալ կամաց-կամաց փարատվում են ու նրանք պատմում են որպես Ջեմալ ու Ջամալ, իրենց հայրերից լսած համշենահայերի Գողգոթայի մասին՝ Արեւմտյան Հայաստանից Վրաստան, ապա՝ բռնագաղթ դեպի Կենտրոնական Ասիայի խորքերը: Այդ անպատմելի տառապանքները մեզ պատմում է 1944 թ.-ի արհավիրքը վերապրած, Ղազախստանում եւ Ղրղզստանում պատասխանատու պաշտոններ վարած, այժմ Ֆեդերցովկայում անասնապահությամբ զբաղվող կապուտաչյա ու բարձրահասակ Եաշար Ագբենյուկովը («պապի»):

- Ասում են, որ Ստալինը հրամայել է Բերիային զինվորական ծառայությունից փախչող մեգրելներին աքսորել Կենտրոնական Ասիա: Բայց արյունարբու չեկիստը, պատճառաբանելով, որ համշենցիները մուսուլման լինելով կարող են թուրքերի կողմն անցնել պատերազմի պարագայում, մի գիշերում, բեռնակառքերով ու գնացքի վագոններով, ահավոր ցրտին, 1944թ.-ին, բոլորիս աքսորեց Ղրղզստանի ահավոր շրջանները: Հազարավոր համշենցիներ մահացան ցրտից ու սովից:

Այժմ ապրում ենք Ռուսաստանի այս տարածքում, ոչխար ու կով ենք պահում, ուտելիքը շատ է, մեր երիտասարդները աշխատում եւ սովորում են Մոսկվայում եւ այլ քաղաքներում: Մեր սերտ կապերը պահպանում ենք Թուրքիայի, Վրաստանի, Ղրղզստանի մեր հայրենակիցների հետ, այցելում եւ մասնակցում նրանց հարսանիքներին, ուրախություններին, տխուր իրադարձություններին»:

Իսկ Ագբենյուկովի «հարսը», նույնպես կապուտաչյա ու շիկահեր, մեր ներկա լինելու հարսանիքի կազմակերպիչներից Հաֆիզե Կարահիպրահիմովի հայրը Կյազըմը, գրել է համշենահայերի տառապանքի ու արտագաղթի, Ղազախստանում նրանց բազմաչարչար կյանքի պատմությունը՝ ռուսերեն եւ ղազախերեն լեզուներով:

«Ցանկանում ենք, որ բոլոր հայերը ձեր նման գան եւ այցելեն մեր բնակավայրերը, այստեղ, թե Վորոնեժում, Օշում, թե այլուր: Մեզ մի՛ մոռացեք: Բարի եք եկել ու մեր թանկագին հյուրն եք միշտ», համշենահայերենով հրավիրում է 3 տղաների ու մի դուստրի մայր Հաֆիզեն, որ իր քույրերի հետ մեզ «խեղդեց» համադամ ուտելիքներով ու քաղցրավենիքով: Մինչ մեր կրոնափոխ եղբայրները, իրենց քրիստոնյա հայրենակիցների նման, օգտագործում էին ալկոհոլ, կանայք բաց դեմքերով էին, իսկ հարսանիքին, որը տեղի ունեցավ մյուս օրը՝ պարում էին «Հոյոն» ռազմահայրենասիրական խմբապարը, ձեռք-ձեռքի տված բոլոր հյուրերի ու ցեղակիցների հետ: Մահմեդական կրոնը ստիպել է նրանց կառչել ազգային բնորոշ ավանդույթներից, նաեւ գոյատեւել թուրք եւ թրքազգի ժողովուրդների մեջ, 400 տարի շարունակ...:



1944թ.-ի մեծ աքսորը վերապրած Ագբենյուկովը

Այս բոլորը ակնհայտ երեւաց մյուս օրը հետմիջօրեին, երբ ինքնաշարժերի շարասյունով, զուռնա-դհոլով (Վորոնեժի մեսխեթցի թուրքերի կատարողությամբ ու երգերով... հայկական կովկասյան մեղեդիներով) գնացինք «բերելու» հոր կողմից համշենցի ու մոր կողմից թաթար՝ գեղեցկուհի Զիլնարային, որ սահուն կերպով խոսում էր համշենահայերեն ու իրեն «պահեց» որպես հիանալի հարսնացու, հարգելով հնագույն ավանդույթները եւ սովորությունները: Հարսանիքին ներկա էին Մոսկվայից թե Ռուսաստանից ժամանած հյուրեր եւ ազգակիցներ, Ռուսլան Կարաբալակովի ազգակիցները Բիշկեկից եւ Օշից, Ղազախստանից: Կարծես թե համացեղային, համազգային այս կարեւոր իրադարձությունը տեղի էր ունենում Արցախում կամ Հայաստանի գյուղերում, բազմադարյա հարսանքային սովորույթների բոլոր մանրամասներով: Հեռախոսային զրույց ունեցանք Ղրղզստանի եւ Ղազախստանի համշենցի թե հայ անձնավորությունների հետ՝ իմանալով, որ բազմաթիվ համշենցի ընտանիքներ պատրաստ են, եթե անհրաժեշտ միջոցները ձեռնարկվեն, գալու եւ հաստատվելու Արցախի Մարդակերտի «դրախտավայր»-ում, որտեղ ի վերջո կիրականացվի մեր տարաբախտ հայրենակիցների երազը՝ գլխավորությամբ մեծ հայրենասեր Ռուլդան Կարաբալակովի եւ որդու՝ Ռուսլանի:

Մեր եռօրյա անմոռանալի այցելությունը եզրափակվում է նաեւ մոտակա լճակի մոտ կազմակերպված նոր կերուխումով («ուտող-խմող» համշենահայերենով): Խոստանում ենք ներկա լինել մոտակա ուրիշ հարսանիքների, լուսաբանելով մեր վերագտած ազգակիցների կյանքը աշխարհատարած սփյուռքով եւ հայրենիքով մեկ:

**ՀԱՄՈ ՄՈՍԿՈՖՅԱՆ**

**Մոսկվա-Ֆեդերցովկա-Երեւան**

*ԱՐՁԱԳԱՆՔ*

# Նախկին վարչապետը չի տարբերում «օտարումն» ու «լուծարումը»

**Հայ ազգային կոնգրես կոչվող քաղաքական ուժը հուլիսի 13-ին հայտարարություն է տարածել նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանի՝ դատական ատյանների կողմից տուգանվելու կապակցությամբ: Բանն այն է, որ նախկին վարչապետի բազում անհեթեթություններից մեկի կապակցությամբ, հերքելու եւ ներողություն խնդրելու պահանջով դատարան էին դիմել Կենտրոնական բանկն ու ներկայիս վարչապետ Տիգրան Սարգսյանը:**

**Համառոտ ներկայացնենք խնդրի էությունը: Հրանտ Բագրատյանը մեղադրել էր Տիգրան Սարգսյանին՝ նրա ԿԲ նախագահ եղած ժամանակ «Ագրոբանկը» անվճարունակ դարձնելու եւ «Հայխնայբանկի» սեփականաշնորհումը ԿԲ կողմից կազմակերպելու մեջ: Բնական է, որ, ինչպես միշտ, Հրանտ Բագրատյանը իրեն նեղություն չէր տվել փաստերով խոսել: Դրանից հետո Տիգրան Սարգսյանը եւ Կենտրոնական բանկը դիմել են դատարան: Դատարանը որոշել է Հրանտ Բագրատյանին պարտավորեցնել հրապարակել հերքում, ներողություն խնդրել ԿԲ-ից եւ Տիգրան Սարգսյանից, միաժամանակ տուգանելով նրան 602 հազար դրամ: Քանի որ հիշյալ հերքումն ու ներողությունը Հրանտ Բագրատյանը չի հրապարակել, դատարանը նրան մեկ անգամ տուգանում է 200 հազար դրամով եւ եւս երկու անգամ 400-հազարական դրամով:**

**Ահա այս մասին է Հայ ազգային կոնգրեսի հայտարարությունը: Անկախ ամեն ինչից, այն շատ հասկանշական բացահայտում է անում: Հայտարարության մեջ հետեւյալ նախադասությունն է գրված՝ «կառչելով նախկին վարչապետի խոսքում «լուծարում» բառի փոխարեն օգտագործված «օտարում» բառից»: Ուշադրություն պետք է դարձնել, որ հայտարարության մեջ չի նշվում, թե շփոթությամբ է Հրանտ Բագրատյանը «օտարում» բառն օգտագործել, ավելին՝ այդ բառերը ներկայացվում են որպես հոմանիշներ: Հետեւաբար, Հայ ազգային կոնգրեսը նույնպես փաստել է Հրանտ Բագրատյանի տնտեսագիտական գիտելիքների, մեղմ ասած, անմխիթար մակարդակը, հաստատելով, որ նախկին վարչապետը միմյանցից չի տարբերում «օտարումն» ու «լուծարումը»: Եվ պատահական չէ, որ այս մարդն է եղել վարչապետը 90-ականների առաջին կեսին, երբ երկրի տնտեսությունը պարզապես փլուզվեց, փակվեցին 600 հազար աշխատատեղեր (ըստ Համաշխարհային բանկի տվյալների), հարյուրհազարավոր մեր հայրենակիցներ արտագաղթեցին Հայաստանից, իսկ մնացյալն ընկղմվեցին էներգետիկ ճգնաժամ կոչվող դաժան իրականության մեջ, որն ուղեկցվում էր զանգվածային աղքատացմամբ: Ընդհանրապես Հրանտ Բագրատյանին թվում է, թե ներկա սոցիալական խնդիրները եւ դժգոհությունները գործող իշխանություններից՝ մարդկանց կստիպեն մոռանալ իր եւ իրեն ներկայացնող քաղաքական ուժի կառավարման տարիները:**

**Սակայն վերադառնանք նախկին վարչապետի ներկա գործունեությանը եւ նրա մասնագիտական ունակություններին: Առիթ ունեցել ենք թվարկելու, թե քանի անգամ նրա կանխատեսումները պարզապես փուչ են դուրս եկել, քանի որ դրանք առանձնապես չեն տարբերվել գուշակություններից եւ չեն ունեցել որեւէ մասնագիտական հիմք: Սակայն նախկին վարչապետը չի ընկրկում: Նա շարունակում է մամուլի ասուլիսներ հրավիրել, գոռգոռալ, զայրանալ, հասկապես ջանալով սեւացնել գործող վարչապետին: Նախկին հրապարակման մեջ գրել էինք, որ դա հետեւանք է Հրանտ Բագրատյանի՝ դեռ 90-ականներից եկող «աբիժնիկության», երբ Լեւոն Տեր-Պետրոսյանն ընդունեց այն ժամանակ ընդդիմադիր Տիգրան Սարգսյանի մոտեցումը հայկական դրամին անցնելու մասին, այլ ոչ թե Հրանտ Բագրատյանի պնդումը՝ մնալ միակ երկիրը, որտեղ պահպանվելու է սովետական ռուբլին: Սակայն պարզվում է, որ դա Տիգրան Սարգսյանից Հրանտ Բագրատյանի նեղացած լինելու միակ պատճառը չէ: Փաստորեն, դրան ավելացել է նաեւ ներկայումս դատարանի կողմից Հրանտ Բագրատյանին պարբերաբար տուգանելը: Ինչի մեղքը, սակայն, Հրանտ Բագրատյանը լավ կլինի, որ փնտրի իր մեջ: Ի վերջո, շատ գիտելիքներ պետք չեն տարբերելու համար «օտարումն» ու «լուծարումը», իսկ եթե չի տարբերում, ապա գոնե ընդունի իր չիմացությունը եւ կատարի դատարանի որոշումը:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

***Հ. Գ. - Ուշ երեկոյան ՀՀ արդարադատության նախարարությունը տեղեկացրեց, որ Հ. Բագրատյանի վերաբերյալ կատարողական վարույթն ավարտված է, քանի որ պահանջատերը խնդրել է վերադարձնել կատարողական թերթիկը:***

# Հարավ. Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագիրը

**ԱԽ քարտուղար Արթուր Բաղդասարյանն ընդունել է Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագրի համակարգող Ֆիլիպ Փիրսին:**

**ՄԱԶԾ ղեկավարության եւ ՀԿՍՀԿ հայաստանյան թիմի հետ իրականացվող ծրագրի ընթացքի, ժամկետների եւ բյուջեի հետ կապված հարցերի քննարկման նպատակով Հայաստանում գտնվող Ֆիլիպ Փիրսը Արթուր Բաղդասարյանին տեղեկացրել է ծրագրի ընթացքի եւ առկա խնդիրների մասին եւ իր գոհունակությունն է հայտնել ծրագրի առաջընթացի վերաբերյալ:**

**Արթուր Բաղդասարյանը կարեւորել է Հարավային Կովկասում սահմանների համալիր կառավարման ծրագիրը, քանի որ այն թույլ է տալիս արդյունավետ եւ համապարփակ մոտեցում ցուցաբերել սահմանի կառավարմանն առնչվող խնդիրներին հարակից բոլոր ոլորտներում, այդ թվում՝ միգրացիա, թրաֆիքինգ, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն, ինչպես նաեւ առեւտրի դյուրինացում եւ մարդկանց ազատ եւ անվտանգ սահմանացում, որոնք որ գերակա առաջնահերթության հարցեր են Հայաստան-ԵՄ հետագա համագործակցության խթանման գործընթացում:**

**Արթուր Բաղդասարյանն ընդգծել է սահմանային ենթակառուցվածքների արդիականացման գործընթացում իրատեսական հիմքերի վրա կարիքների գնահատման իրականացման անհրաժեշտությունը, որը թույլ կտա առավելագույնս արդյունավետ բաշխել նախատեսված ֆինանսական միջոցները, եւ կարեւորել է այս համատեքստում ԵՄ փորձագիտական աջակցությունը: Նա նաեւ շեշտել է սահմանային ենթակառուցվածքների եւ սարքավորումների արդիականացմանը համընթաց բովանդակային մասի կարեւորության փաստը, այն է՝ վերապատրաստումների եւ դասընթացների կազմակերպում սահմանի կառավարման հարցերում ներգրավված մարմինների համար, այդ մարմինների պարտականությունների հստակ բաշխում, ինչպես նաեւ լիազորությունների ոչ պատշաճ իրականացմանը վերաբերող համապատասխան օրենսդրական փոփոխություններ՝ «մեկ պատուհան» սկզբունքի լիարժեք կենսագործման նպատակով:**

**Ֆիլիպ Փիրսը տեղեկացրել է, որ ապագայում նախատեսվում է հիմնել սահմանների համալիր կառավարման հարցերով միջազգային խորհրդատվական խումբ, որն այդ հարցում կարող է կարեւոր դերակատարություն ունենալ՝ մասնագիտական եւ փորձագիտական աջակցության տեսքով:**

**Քննարկվել է Հայաստանում Արեւելյան գործընկերության, ԵՄ անդամ եւ այլ երկրների մասնակցությամբ սահմանների համալիր կառավարմանը նվիրված միջազգային համաժողովի կազմակերպման հարցը, որի ընթացքում կներկայացվի այս ոլորտում առաջընթացը, կիրականացվի լավագույն փորձի փոխանակում, եւ կծավալվեն քննարկումներ սահմանների կառավարմանն առնչվող հարցերի շուրջը:**

# «Թուրքիան ԱՄՆ-ում աշխատավարձի կարգով վարձատրում է ցեղասպանության ժխտողականությունը պաշտպանող գիտնականներին»

*Հայտարարում է Թաներ Աքչամը եւ փոխադարձաբար մեղադրվում*

Ամերիկաբնակ Թաներ Աքչամը այն հազվագյուտ թուրք պատմաբաններից է, որը ոչ միայն Հայոց ցեղասպանության հարցին նվիրված ուսումնասիրություններ է կատարում, այլեւ թուրքական սպառնալիքներն անտեսելու գնով ամեն կերպ պայքարում է Թուրքիայում Հայոց ցեղասպանության ճանաչման համար: Անցյալ ամիս նա, մասնակցելով Արիզոնայի «Գլենդել» հանրային գրադարանում կազմակերպված միջոցառմանը, ինչպես հուլիսի 13-ին նշել է «Միլիեթը», հայտարարում է, որ Թուրքիան ցեղասպանության ժխտողականության տարածումը խրախուսելու համար փողեր է բաժանում ամերիկացի որոշ գիտնականների:

Աքչամը ասել է, որ ԱՄՆ-ում թուրքական կառավարությունը շատ ագրեսիվ ու համակարգված քարոզարշավ է ծավալում, դեկտեմբերին ինքը եղել է Թուրքիայում եւ հանդիպել Թուրքիայի արտգործնախարարության հետ համագործակցող մի անձնավորությանը, որն էլ իրեն ասել է. «2004-2005-ին ամերիկացի մի պրոֆեսոր հանդիպման ընթացքում թուրք պետական գործիչներին զգուշացրեց, որ ցեղասպանության հայկական թեզերի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցը դրանց գիտական աշխատություններով հերքումն է»: Ըստ Աքչամի, Թուրքիայի արտգործնախարարությունը հավանություն է տվել այս մտքին եւ ֆինանսական գումարներ է ուղարկել ԱՄՆ:

Այդ անձնավորությունը Թուրքիայից վարձատրվող գիտնականների անուններն է տվել Աքչամին, որն էլ առանց անուններ տալու ընդգծել է, որ վարձատրման գործարքին վերաբերվող փաստաթղթերը Թուրքիայի արտգործնախարարության արխիվներում են: Աքչամը թերեւս նշել է Մայքլ Գյունթերի անունը, որն իր վերջին աշխատության մեջ արտահայտվելով 600.000 հայի մահվան մասին, այդուհանդերձ գրել է, որ դա ցեղասպանություն չէր: Ի դեպ, Գյունթերի գրքի մասին գովեստով են խոսել այնպիսի գիտնականներ, ինչպիսիք են Հաքան Յավուզը, Գյունթեր Լեւին, Ջերեմի Սոլթը, Էդվարդ Էրիկսոնը, որոնք մեղադրվում են Թուրքիայի արտգործնախարարությունից գումարներ ստանալու մեջ:

Որքան էլ Աքչամը Գյունթերից բացի այլ անուններ չնշի, այնուամենայնիվ «Վաթանը» հեռախոսակապ է հաստատել Թուրքիայից աշխատավարձի կարգով վարձատրվող այն գիտնականների հետ, որոնց անունից թուրքական թերթի հարցերին պատասխանել է Յութահի համալսարանի արտաքին հարաբերությունների բաժնի աշխատակից դոկտ. Հաքան Յավուզը:

Նա, ինչպես հուլիսի 14-ին գրել է «Վաթանը», մասնավորապես ասել է. «Գյունթերի վերջին գիրքը խիստ անհանգստացրել է Թաներ Աքչամին, որովհետեւ հերքում է նրա թեզերը: Միաժամանակ ցույց է տալիս, որ Աքչամը ինչպես է խեղաթյուրում հայկական պնդումներին առնչվող աղբյուրները: Որոշել ենք դատական միջոցների դիմել Աքչամի դեմ, պայմանավորվելով այն դատապաշտպանի հետ, որը դատարանում շահել էր սփյուռքահայերի դեմ Լեւինի դատը: Մենք մեր աշխատավարձը համալսարանից ենք ստանում եւ որեւէ առնչություն չունենք Թուրքիայի արտգործնախարարության հետ: Իսկ Աքչամը, բոլորին է հայտնի, աշխատավարձ է ստանում սփյուռքահայ արմատական մի կառույցից: Աքչամը մեզ մեղադրելիս դարձնում է դաշնակների եւ հնչակների նշանառության թիրախ: Մեր կյանքը վտանգված է: ԱՍԱԼԱ-ի նման կառույցներ ԱՄՆ-ում աճում են, իսկ հայկական սփյուռքը հետզհետե դառնում է ավելի արմատական: Աքչամն աշխատասեր անձնավորություն է, սակայն կատաղի ցասում կա նրա մեջ: Թուրքիայում բանտարկված լինելու պատճառով ատելությամբ է լցված թուրքական հասարակության եւ թուրքերի պատմության դեմ: Թերեւս այդ ցասումն էր պատճառը, որ կինը լքեց նրան: Աքչամը լիովին փոխհատուցում է սփյուռքից ստացած գումարը: Ամերիկայում դուք չեք գտնի սփյուռքահայերի ֆինանսավորած մեկ այլ անձնավորություն, որն Աքչամի պես կրակոտ լինի ցեղասպանության թեզը պաշտպանելու հարցում»:

Հ. ՉԱՔՐՅԱՆ

## Դա էր պակասում

Կատարյալ հիմար վիճակում հայտնվելու համար Իլհամ Ալիեւին ներկուսակցական ճգնաժամն էր պակասում: Բայց Աստված բարեգութ է գտնվել նաեւ այս հարցում. կառավարող «Ենի Ազարբայջան»-ի գործադիր քարտուղար Ալի Ահմեդովը հայտնվել է միանգամից մի քանի լրատվամիջոցի ուշադրության կիզակենտրոնում: Այդ մասին տեղեկացնում է Pia.az-ը:

Բանն այն է, որ հիշյալ ֆունկցիոները կառավարող կուսակցություն է տեղափոխվել ընդդիմադիր ճամբարից: Տարիներ շարունակ նա պատասխանատու պաշտոն է զբաղեցրել Էթիբար Մամեդովի Ազգային անկախության կուսակցությունում: Ահմեդովի դեմ քարոզարշավի մեկնարկը տվել է նախկինում մամուլի եւ տեղեկատվության հարցերի նախարարի եւ կառավարող կուսակցության նախագահի տեղակալի պաշտոնն զբաղեցրած Սիրուս Թավրիզլին:

Վերջինս կարծում է, որ ազգային անկախության կուսակցությունում աշխատած տարիներին Ալի Ահմեդովն անձամբ է հեղինակել Էթիբար Մամեդովի՝ Հեյդար Ալիեւի «հասցեին կոշտ քննադատություն պարունակող ելույթները»: Թավրիզլին ասել է, որ կան «այդ տեքստերի՝ Ալի Ահմեդովի ձեռքով գրված բնօրինակները»: Ըստ այդմ, «բանակցություններ են վարվում թերթերի խմբագիրների հետ, եւ դրանք մոտ օրերս կհրապարակվեն»:

Ստացվում է, որ Հեյդար Ալիեւի դեմ կրակոտ ելույթների հեղինակ Ալի Ահմեդովն այսօր նրա հիմնադրած եւ Իլհամ Ալիեւի ժառանգած «Ենի Ազարբայջան» կառավարող կուսակցության երկրորդ դեմքն է:

Ի՞նչ տեղի կունենա, եթե Թավրիզլիի ասածն իրականություն դառնա, եւ հրապարակվեն Ահմեդովի հեղինակած տեքստերի ձեռագրերը, որոնք ժամանակին նա պատրաստել է ընդդիմադիր Էթիբար Մամեդովի համար՝ Հեյդար Ալիեւի, ուրեմն եւ՝ այն կուսակցության դեմ, որտեղ նա այսօր շատ պատասխանատու եւ պատվավոր պաշտոն ունի:

Բանն, ամենայն հավանականությամբ, կավարտվի Ահմեդովի հրաժարականով: Բայց կների՞ նրան Իլհամ Ալիեւը: Թերեւս՝ ոչ: Քանի որ ավելի վաղ Ահմեդովը մամուլում մեղադրվել է նաեւ ապօրինի տնտեսական գործունեության մեջ:

Ամենահետաքրքրականը, սակայն, այն է, թե արդյոք Ահմեդովը միա՞կն է կառավարող կուսակցությունում, որ «դավանափոխ է եղել»: Ամենայն հավանականությամբ, ուրիշներ նույնպես կգտնվեն, որ «Ենի Ազարբայջանի»-ին անդամակցել են ոչ թե համոզմունքով, այլ՝ որպեսզի «արեւի տակ տեղ ունենան»:

Բացառված չէ, որ ներկուսակցական խարդավանքների շուրջը եղած հետաքրքրությունը պայմանավորված է Իլհամ Ալիեւի քաղաքականությունից հասարակության հիասթափությամբ: Իսկ դա բավական խոսուն ազդակ է առ այն, որ Ադրբեջանում «անշրջելի կայունության» մասին Իլհամ Ալիեւի հավաստիացումներն ընդամենը ինքնահանգստացման փորձ են:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

## Եգիպտոսում կպատժվեն հարյուրավոր ոստիկաններ

Տարեսկզբին ցուցարարների սպանությանը մեղսակից դարձած մոտ 700 ոստիկաններ շուտով կհեռացվեն աշխատանքից: Այդ մասին հաղորդում է BBC-ն, վկայակոչելով Եգիպտոսի ներքին գործերի նախարար Մանսուր ալ Իսավիին:

Ալ Իսավիի խոսքերով՝ մինչեւ 2011-ի օգոստոսի 1-ը պաշտոնանկ կարվեն 505 գեներալ եւ 164 սպա: Եգիպտոսի պետական հեռուստատեսության հաղորդման համաձայն, 37 նախկին ոստիկանների կներկայացվեն սպանության մեղադրանքներ:

Ցուցարարների մահվանը մեղսակից ոստիկանների հեռացումը եւ իրավակարգի նախկին պահապանների դատապարտումը մինչեւ օրս Եգիպտոսում շարունակվող բողոքի ցույցերի մասնակիցների գլխավոր պահանջներից է: Ցուցարարները պահանջում են նաեւ շուտափույթ դատել նախկին նախագահ Հոսնի Մուբարաքի մերձավորներին:

Ի դեպ, ներկայումս կառավարող Զինված ուժերի գերագույն խորհրդի ներկայացուցիչը հայտարարել է, որ սեպտեմբերին նշանակված խորհրդարանական ընտրությունները հետաձգվում են եւ կանցկացվեն հոկտեմբերին կամ նոյեմբերին:

Նախագահ Հոսնի Մուբարաքի հրաժարականի պահանջով բողոքի հակակառավարական ելույթները սկսվել էին 2011-ի հունվարի 25-ին: Անկարգությունների ընթացքում երկրում զոհվել էր առնվազն 800 ցուցարար: Հաղորդվել էր նաեւ ոստիկանների սպանության մասին:

Ինչ վերաբերում է Մուբարաքին, նա հրաժարական տվեց փետրվարի 11-ին: Նրան եւ իր երկու որդիներին ներկայացված են ապօրինաբար հարստանալու եւ իրավասությունները չարաշահելու մեղադրանքներ: Դատը պետք է սկսվի օգոստոսի 3-ին: Մինչ այդ նախկին նախագահը կալանքի տակ կմնա Շարմ էլ Շեյխի հիվանդանոցներից մեկում:

ՃԱՊՈՆԻԱ

## Նաոտո Կան. «Պետք է վերացնենք կախումը ատոմային էներգետիկայից»



Ճապոնիան պետք է կառուցի այնպիսի հասարակություն, որը կախված չի լինի ատոմային էներգետիկայից: Այդ մասին Տոկիոյում կազմակերպված մամուլի ասուլիսում հայտարարել է վարչապետ Նաոտո Կանը: Հայտարարությունն արվել է «Ֆուկուշիմա-1» ատոմակայանի վթարից հետո տիրող համաժողովրդական դժգոհության պայմաններում, նշում է BBC-ն:

«Մենք պետք է աստիճանաբար վերացնենք կախվածությունը ատոմակայաններից: Մեր երկիրը պետք է շարժվի այդ ուղղությամբ», ասել է վարչապետը:

Նախքան «Ֆուկուշիմա-1»-ի վթարը Ճապոնիան էլեկտրաէներգիայի 30 տոկոսը ստանում էր իր ատոմակայաններից: Անցյալ տարի ընդունված էներգետիկ զարգացման ծրագրով նախատեսվում էր մինչեւ 2030 թվականը էներգապահովման մեջ ատոմային էներգիայի բաժինը հասցնել 53 տոկոսի:

Սակայն 2011-ի մարտին սաստիկ երկրաշարժի եւ ցունամիի հետեւանքով շարքից դուրս եկավ «Ֆուկուշիմա-1»-ի ռեակտորների հովացման համակարգը: Վթարից հետո արտանետված ռադիոակտիվ նյութերի քանակը կազմեց 1986-ին Չեռնոբիլի ԱԷԿ-ի աղետից հետո արտանետված նյութերի մակարդակի 15 տոկոսը:

«Ֆուկուշիմա-1»-ի վթարից հետո հասարակության տրամադրության կտրուկ փոփոխությունը վարչապետին ստիպեց վերանայել էներգետիկ ռազմավարությունը: Որոշվել է այսուհետեւ ավելի մեծ ուշադրություն դարձնել էներգիայի վերականգնելի աղբյուրներին:

Անցյալ տարի վարչապետ ընտրված Նաոտո Կանի վարկանիշը «Ֆուկուշիմա-1»-ի վթարից հետո կտրուկ ընկավ: Այս շաբաթ անցկացված հարցման տվյալների համաձայն, վարչապետի աշխատանքից գոհ է ճապոնացիների ընդամենը 16 տոկոսը:

## Հունաստանն ու ԱՄՆ-ը մեղադրվում են Իսրայելի կամակատարը դառնալու մեջ

Ինչպես հայտնի է, հունիսի 27-ին, շրջափակումը ճեղքելու նպատակով նախատեսվում էր Գազա ուղարկել «Ազատություն» նավատորմիղը: Իսրայելին նախ հաջողվեց այդ ծրագրից դուրս մղել Թուրքիային, ապա հետաձգել նավարկությունն ու ձախողել ծրագիրը:

Նախորդ օրը «Դունիա բուլթենի» կայքէջի վկայությամբ, Շվեդիայի մայրաքաղաք Ստոկհոլմում, մի խումբ մտավորականներ, հասարակական եւ քաղաքական գործիչներ խորհրդարանի առջեւ կազմակերպել են բողոքի ցույց: Նրանք «Ազատություն» նավատորմիղի ուղեւորությունը դեպի Գազա խոչընդոտելու համար Հունաստանին եւ Եվրոմիությանը մեղադրել են Իսրայելի կամակատարը դառնալու մեջ: Ելույթ է ունեցել ծրագրին մասնակից պատմաբան Մաթիաս Գարդելը: Նա ասել է, որ նավատորմիղի ուղեւորությունը դեպի Գազա խափանելու համար Իսրայելը ճնշում է գործադրել Հունաստանի կառավարության վրա, Կենտրոնական հետախուզական վարչությունն ու Մոսադը 4 ամիս շարունակ պատրաստվել են դրան:

Այնուհետեւ Գարդելը շարունակել է. «Նավապետներին ձերբակալեցին: Սաբոտաժի ենթարկեցին նավերը, վնասելով, օրինակ, շվեդական եւ իռլանդական նավերի շարժիչները: Եվ դա արեցին Իսրայելի գաղտնի ծառայությունները: Երբ մենք վերանորոգելով նավերը պատրաստվում էինք դուրս գալ բաց ծով, հանկարծ Հունաստանի կառավարությունը արգելեց նավահանգստից դուրս բերել նավերը»:

Հ. Չ.

## Բեռլուսկոնին կրճատում է պատգամավորների աշխատավարձերն ու արտոնությունները

Վախենալով հունական սցենարի կրկնությունից՝ Իտալիայի կառավարությունը մտադրվել է ընդունել ծախսերը 40 մլրդ եվրոյով կրճատելու ծրագիր: Խնայողության ռեժիմի իրականացման մեջ առաջին օրինակը պետք է դառնան իտալացի քաղաքական գործիչները, գրում է «Ուոլ սթրիթ ջորնըլ» թերթը:

Չնայած պետական ծախսերի ամենամյա կրճատմանը, խորհրդարանի ստորին պալատի անդամների եկամուտները մնում են 140 հազ. եվրո մակարդակի վրա, ինչը, օրինակ, կրկնակի գերազանցում է բրիտանացի օրենսդիրների տարեկան աշխատավարձը:

«Ճգնաժամը մեզ ստիպում է հնարավորինս շուտ ընդունել դաժան խնայողության միջոցների փաթեթ», հայտարարել է Իտալիայի վարչապետ Սիլվիո Բեռլուսկոնին: Նրա նախագծի համաձայն, այս տարի ծախսերը կրճատվելու են 1,8 մլրդ եվրոյով, 2012-ին՝ 5,5 մլրդ-ով:

Ընդհանուր առմամբ խնայողության նպատակն է մինչեւ 2014 թ. բյուջեի պակասորդը իջեցնել Եվրոմիությունում սահմանված 3 %-ի մակարդակին, ինչպես նաեւ Իտալիայի պետական պարտքն իջեցնել 11,2 %-ի:

Պետական գանձարանը լցնելու համար ծրագրով նախատեսված հիմնական միջոցներն են՝ ընկերությունների եւ մասնավոր անձանց հարկային արտոնությունների վերացումը, տեղական կառավարման մարմինների բյուջեների կրճատումը, պետծառայողների աշխատավարձերի սառեցումը եւ քաղաքական գործիչների արտոնությունների եւ պարգեւավճարների կրճատումը:

Իտալիայի խորհրդարանում այս տարվա մարտին անցկացված ներքին հետազոտության համաձայն, տեղացի օրենսդիրների ամենամսյա աշխատավարձը կազմում է միջինը 11,7 հազ. եվրո, մինչդեռ Մեծ Բրիտանիայի Համայնքների պալատի պատգամավորներինը, օրինակ, 6,35 հազ. է:

Աշխատավարձից բացի իտալացի պատգամավորները ամսական մոտ 8,733 հազ. եվրո են ստանում օգնականներին վճարելու եւ այլ ծախսերի համար: Ըստ որում, օրենսդիրները հաշիվ չեն տալիս, թե ինչպես է ծախսվում այդ հավելյալ գումարը:

Ի տարբերություն իրենց եվրոպացի գործընկերների՝ իտալացի պատգամավորները կարող են օգտվել նաեւ զգալի արտոնություններից, որոնք ներառում են երկրի խորհրդարանի շենքում կամ մասնավոր նստավայրերում անվճար բնակվելը, աշխարհով մեկ անվճար թռիչքներ կատարելը եւ նույնիսկ վարսավիրանոցում անվճար մազ կտրելը: 2010 թ. գանձարանը 46,5 մլն եվրո է ծախսել պատգամավորական բնակարանների վարձերի վրա եւ 10,1 մլն եվրո՝ բուժսպասարկման հատուցումների վրա:

Պ. Ք.

# Տիգրան Պետրոսյանի հաղթարշավն ընդհատվեց

## Հայ գրոսմայստերը պահպանեց առաջատարի դիրքը




**Իտալիայում ընթացող շախմատի մրցաշարի 7-րդ տուրում Տիգրան Պետրոսյանն առաջին կես միավորը կորցրեց: 6 անընդմեջ հաղթանակ տոնած եւ աղյուսակը միանձնյա գլխավորող հայ շախմատիստի հաղթարշավը հաջողվեց կասեցնել պերուացի գրոսմայստեր Խուլիո Գրանդային, որը սեւերով հաշտություն կնքեց Պետրոսյանի հետ: Վերջինս 6,5 միավորով շարունակում է միանձնյա գլխավորել աղյուսակը:**

**Առաջատարների շարքում գտնվող Կարեն Մովսիսյանն անդրանիկ պարտությունը կրեց՝ զիջելով բուլղարացի Ալեքսանդր Դելչեւին: Վերջինս Իրժի Ստոչեկի, Խուլիո Գրանդայի, Միխայլո Օլեքսիենկոյի, Գեորգի Տիմոշենկոյի, Դենիս Կադրիչի եւ Դանիել Նարոդիցկու հետ 6 միավորով հետապնդում է առաջատարին: Կարեն Մովսիսյանը 5,5 միավորով 10-րդ տեղում է:**

**5,5 միավոր է վաստակել նաեւ Զավեն Անդրեասյանը: Նա սեւերով ոչ-ոքի խաղաց Խեսուս դե լա Վիլյայի հետ: Անդրեասյանը զբաղեցնում է 23-րդ հորիզոնականը:**

**Մրցաշարի ավարտին մնացել է 2 տուր: Նախավերջին՝ 8-րդ տուրում Տիգրան Պետրոսյանը սպիտակներով կխաղա չեխ Իրժի Ստոչեկի հետ: Վերջինս 7-րդ տուրում ոչ-ոքի ավարտեց մրցավեճը Միխայլո Օլեքսիենկոյի հետ: Զավեն Անդրեասյանի մրցակիցը կլինի 5,5 միավոր ունեցող Յացեկ Ստոպան, իսկ Կարեն Մովսիսյանը կմրցի Ալվարո Ռիոբոյի հետ:**

# Սիմոնյանը բաժանվեց խաղաղությամբ

Հունաստանի Ռեթիմնո քաղաքում ընթացող շախմատի մրցաշարի 4-րդ տուրում Տիգրան Սիմոնյանը ոչ-ոքի խաղաց Ալեքսանդր Խարիտոնովի հետ ու վաստակեց 3 միավոր: Այդ ցուցանիշով նա ընթանում է 24-րդ տեղում:

4-ական միավորով աղյուսակը գլխավորում են Յուրի Կրիվոռուչկոն, Անդրեյ Ռիչագովը, Խրիստոս Բանիկասն ու Նիկիտա Մայորովը:

# «ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ

**ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ** (եռամսյակային)

**«ԱՐԴՇԻՆԻՆՎԵՍՏԲԱՆԿ» ՓԲԸ**

01/04/2011 թ-ից ___30/06/2011___ թ.
(հազ. դրամ)

| Նորմատիվներ | Նորմատիվի փաստացի մեծությունը՝ հաշվարկված բանկի համար | ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| Բանկի կանոնադրական հիմնադրամի նվազագույն չափը | 15,513,583 | 50,000 | Խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 29,282,267 | 5,000,000 | Խախտում առկա չէ |
| Ն1 Ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը | 24.15% | 12.0% | Խախտում առկա չէ |
| Ն21 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ընդհանուր ակտիվների գումարների միջև նվազագույն հարաբերակցությունը | 28.70% | 15.0% | Խախտում առկա չէ |
| Ն22 Բանկի բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև նվազագույն հարաբերակցությունը | 131.57% | 60.0% | Խախտում առկա չէ |
| Ն31 Մեկ փոխառուի գծով ռիսկի առավելագույն չափը | 16.84% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Ն32 Խոշոր փոխառուների գծով ռիսկի առավելագույն չափը | 95.41% | 500.0% | Խախտում առկա չէ |
| Ն41 Բանկի հետ կապված մեկ անձի գծով ռիսկի առավելագույն չափը | 3.74% | 5.0% | Խախտում առկա չէ |
| Ն42 Բանկի հետ կապված բոլոր անձանց գծով ռիսկի առավելագույն չափը | 6.69% | 20.0% | Խախտում առկա չէ |
| Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում տեղաբաշխված պարտադիր պահուստների նվազագույն չափը | X | Դրամով - 8% Արտարժույթով - 12 % | Խախտում առկա չէ |

*Բանկի վարչության նախագահի Ժ/Պ (գործադիր տնօրեն)* — *Մանվել Սահակյան*
*Գլխավոր հաշվապահի Ժ/Պ* — *Անահիտ Գյուրջինյան*
*Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.2011թ*

# Վիճարկում են Նանա Ալեքսանդրիայի գավաթը



Փոթիում մեկնարկած հանրաճանաչ վրացի շախմատիստուհի Նանա Ալեքսանդրիայի գավաթի խաղարկությանը մասնակցում են Հայաստանի 44 պատանի շախմատիստ-շախմատիստուհիներ: Շախմատային յուրօրինակ այդ փառատոնն անցկացվում է տարիքային 3 խմբով (8,10 եւ 12 տարեկաններ), իսկ մյուս մասնակիցները հանդես են գալիս բաց մրցաշարում:

Կայացած 3 տուրից հետո լավագույն արդյունքը հայ շախմատիստներից ունեն բաց մրցաշարի մասնակիցներ Դավիթ Շահինյանն ու Արթուր Ղարագյոզյանը, որոնք 3 պարտիաներն էլ շահել են: Շահինյանը հաղթել է վրացի շախմատիստներ Վախթանգ Մալանիային, Տարիել Մոդեբաձեին եւ Նիկոլոզ Կումսիաշվիլուն: Ղարագյոզյանի մրցակիցներն էին վրացի շախմատիստներ Արչիլ Սվանիձեն, Գեորգի Սիբաշվիլին եւ Գեորգի Բագատուրովը: 2,5-ական միավոր են վաստակել Դավիթ Քալաշյանը, Հովիկ Հայրապետյանը, Արման Միքայելյանն ու Խաչատուր Երանյանը:

Ամենակրտսեր տարիքային խմբում (մինչեւ 8 տարեկաններ) տղաների մրցաշարում Հայաստանի 5 պատվիրակներից առայժմ բոլորից հաջող է մեկնարկել Արարատ Մուրադյանը, որը 2 միավորով ընթանում է 6-րդ տեղում: Արարատը մեկնարկում հաղթեց Իլիա Ջանջալիային եւ Գուբազ Կուխիլավային, իսկ 3-րդ տուրում պարտվեց Լազարե Լոմսաձեին: Վերջինս Լեւան Չաչավայի, Շոթա Խոդաշնելիի եւ Նիկոլոզ Կաչարավայի հետ 3 միավորով գլխավորում է աղյուսակը:

Մինչեւ 8 տարեկան աղջիկների մրցաշարում Մանե Հովհաննիսյանը եւ Անահիտ Մկրտչյանը վաստակել են 2-ական միավոր:

Մինչեւ 10 տարեկան տղաների մրցաշարում Հայաստանի շախմատիստներից հաջող է հանդես գալիս Գոռ Թադեւոսյանը, որը 3 հնարավորից վաստակած 2 միավորով ընթանում է 15-րդ տեղում: Գոռը մեկնարկեց հաղթանակով՝ առավելության հասնելով Լեւան Զաբուայի նկատմամբ, ապա ոչ-ոքի խաղաց Դմիտրի Ջիբուտիի եւ Սաբա Չխաիձեի հետ: Տարիքային այս խմբում 3-ական միավորով առաջատարներն են Արչիլ Մեմարնիշվիլին, Նիկոլոզ Պետրիաշվիլին, Կոկա Բուկիան եւ Գեորգի Ինանեյշվիլին: Աղջիկների մրցաշարում 2-ական միավոր ունեն Մարիամ Բաբայանն ու Սուսաննա Հարությունյանը:

Մինչեւ 12 տարեկան տղաների մրցաշարի 3 հայ պատանիներից առավել հաջողը Մհեր Եսայանի մեկնարկն է: Նա մրցաշարը սկսեց Թենգիզ Խուխունաիշվիլու հետ ոչ-ոքի արդյունքով, ապա հաղթեց Նոդար Կվարացխելիային եւ Ալեքսանդր Պանասենկոյին: Առաջատարներն են 3-ական հաղթանակ տոնած Իրակլի Ախվլեդիանին եւ Գեորգի Տավզարաշվիլին: Աղջիկների մրցաշարի մեր միակ մասնակից Անի Իվանյանը 2 միավորով 6-րդ տեղում է: Այստեղ 3-ական միավորով առաջատարներն են Նարմին Մամադովան եւ Թեա Չոլաձեն:

# «Փյունիկի» նախկին մրցակիցները խոշոր հաշվով հաղթանակներ տոնեցին

Կայացան չեմպիոնների լիգայի որակավորման 2-րդ փուլի եւս 11 հանդիպումներ: Ադրբեջանի չեմպիոն Բաքվի «Նեֆթչին» մրցակցի հարկի տակ 0-3 հաշվով զիջեց Զագրեբի «Դինամոյին»: Հիշեցնենք, որ 2009-ին «Փյունիկը» եւս հյուրընկալվելիս նույնպիսի հաշվով զիջել էր «Դինամոյին»: Սեփական հարկի տակ խոշոր հաշվով հաղթանակ տոնեց նաեւ «Փյունիկի» անցյալ տարվա մրցակից Բելգրադի «Պարտիզանը»՝ 4 անպատասխան գնդակ խփելով մակեդոնական «Շկենդիայի» դարպասը: Իսկ առաջին հանդիպումների ամենախոշոր հաշվով հաղթանակն իր օգտին գրանցեց Նորվեգիայի բազմակի չեմպիոն «Ռուսենբորգը»՝ 5-0 հաշվով ջախջախելով իսլանդական «Բրեյդաբլիկին»:

Հաջող մեկնարկեց Վրաստանի չեմպիոն «Զեստաֆոնին»՝ սեփական հարկի տակ 3-0 հաշվով հաղթելով մոլդովական «Դաչիային»: Արդեն առաջին խաղակեսին վրացի ֆուտբոլիստները վճռեցին մրցակցության ելքը: Հաշիվը բացեց Գելաշվիլին, այնուհետեւ 2 անգամ աչքի ընկավ Դվալին:

Լատվիայի չեմպիոն «Սկոնտոն» սեփական հարկի տակ 0-1 հաշվով զիջեց լեհական «Վիսլային»: Իսկ Բելառուսի ԲԱՏԷ-ն հյուրընկալվելիս ոչ-ոքի (1-1) խաղաց Հյուսիսային Իռլանդիայի չեմպիոն «Լինֆիլդի» հետ: Հաջորդ փուլի ուղեգրի հարցը գործնականում լուծեց Հայֆայի «Մաքաբին»՝ սեփական հարկի տակ 5-1 հաշվով առավելության հասնելով Բոսնիայի «Բորացի» նկատմամբ: Նույնը կարելի է ասել նաեւ ֆիննական ՀԻԿ-ի համար, որը 3-0 հաշվով մրցակցի դաշտում հաղթեց Ուելսի «Բանգոր Սիթիին»:

Միեւնույն 2-0 հաշվով Կիպրոսի «Ապոելը» հաղթեց ալբանական «Սկենդերբեուին», ավստրիական «Շտուրմն» առավելության հասավ հունգարական «Վիդեոտոնի» նկատմամբ, իսկ շվեդական «Մալմյոն» պարտության մատնեց Ֆարերների «Տոբսհավնին»:

# Հայաստանը կներկայացնի Հայկանուշ Բեգլարյանը

**Չեխական Օստրավա քաղաքում մեկնարկող թեթեւ ատլետիկայի մինչեւ 23 տարեկանների Եվրոպայի առաջնությունում Հայաստանը կներկայացնի միայն եռացատկորդուհի Հայկանուշ Բեգլարյանը:**

**Մեկ ամիս առաջ 21-ամյա թեթեւատլետուհին հաջող ելույթներ ունեցավ Ռեյկյավիկում անցկացված Եվրոպայի թիմային առաջնությունում, որտեղ 12,83 մետր արդյունքով գրավեց 2-րդ տեղը:**

Սկիզբը՝ էջ 7

| Սեփական կապիտալի տարրերի անվանումը | Կանոնադրական կապիտալ: Կանոնադրական կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Հետգնված կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Զուտ գումարը | Էմիսիոն եկամուտ/վնաս | Գլխավոր պահուստ | Փոխարժեքային տարբերություններ արտերկրյա գործունեությունների վերահաշվարկից | Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատումներ | Դրամական հոսքերի հեջավորում | Ոչ ընթացիկ ակտիվների վերագնահատումից օգուտներ | Չբաշխված շահույթ/վնաս | Միջանկյալ շահութաբաժիններ | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5.1 Իրական արժեքի զուտ փոփոխություն | | | | | | | 313,017 | | | | | | | |
| 5.2 Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | | | | | | | 29,780 | | | | | | | |
| 6. Համադարփակ եկամուտ | | | | | | | | | | | | | | |
| 7. Շահութաբաժիններ | | | | | | | | | | | | | | |
| 8. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 8.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | |
| 9. Ներքին շարժեր, այդ թվում՝ | | | | | 66,553 | | | | | (66,553) | | | | |
| 9.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 66,553 | | | | | (66,553) | | | | |
| 9.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 9.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 9.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | | | | |
| 9.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | | | | |
| 10. Մնացորդը նախորդ ֆինանսական տարվա համադրելի միջանկյալ ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2010թ. (ստուգված/չստուգված) | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 1,029,674 | | (98,520) | | 2,614,205 | 8,554,894 | | 27,613,836 | | 27,613,836 |
| ***Ընթացիկ տարվա միջանկյալ ժամանակաշրջան (տարվա սկզբից աճողական) (II աղյուսակ)*** | | | | | | | | | | | | | | |
| 11. Մնացորդը ֆինանսական տարվա սկզբում առ 01 հունվարի 2011թ. (ստուգված/չստուգված) | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 1,029,674 | | 78,262 | | 2,614,205 | 9,778,927 | | 29,014,651 | | 29,014,651 |
| 11.1. Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը | | | | | | | | | | | | | | |
| 12.Վերահաշվարկված մնացորդը | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 1,029,674 | | 78,262 | | 2,614,205 | 9,778,927 | | 29,014,651 | | 29,014,651 |
| 13. Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 13.1. Ներդրումներ կանոնադրական կապիտալում և կանոնադրական կապիտալի այլ աճ | | | | | | | | | | | | | | |
| 13.2. Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված և շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | | | | | | | | |
| 14.Հաշվետու տարվա (ժամանակաշրջանի) զուտ շահույթ /վնաս | | | | | | | | | | 1,947,082 | | 1,947,082 | | 1,947,082 |
| 15.Վաճառքի համար մատչելի ներդրումների իրացումից ֆին. արդյունքին փոխանցված զուտ օգուտ/վնաս | | | | | | | 147,390 | | | | | 147,390 | | 147,390 |
| 15.1 Իրական արժեքի զուտ փոփոխություն | | | | | | | 150,480 | | | | | | | |
| 15.2 Շահույթ կամ վնաս փոխանցված իրական արժեքի զուտ փոփոխություն | | | | | | | (3,090) | | | | | | | |
| 16. Այլ համադարփակ եկամուտ | | | | | | | | | | | | | | |
| 17. Շահութաբաժիններ | | | | | | | | | | | | | | |
| 18. Սեփական կապիտալի տարրերի այլ ավելացում (նվազեցում), այդ թվում՝ | | | | | | | | | | | | | | |
| 18.1. Որպես սեփական կապիտալի գործիքներ դասակարգված ածանցյալ գործիքների աճ/նվազում | | | | | | | | | | | | | | |
| 19. Ներքին շարժեր, այդ թվում՝ | | | | | 100,387 | | | | | (100,387) | | | | |
| 19.1. Մասհանումներ գլխավոր պահուստին | | | | | 100,387 | | | | | (100,387) | | | | |
| 19.2. Գլխավոր պահուստի հաշվին կուտակված վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 19.3. էմիսիոն վնասի ծածկում | | | | | | | | | | | | | | |
| 19.4. Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վերագնահատումից արժեքի աճի նվազում | | | | | | | | | | | | | | |
| 19.5. Սեփական կապիտալի այլ տարրերի ներքին շարժեր | | | | | | | | | | | | | | |
| 20. Մնացորդը միջանկյալ հաշվետու ժամանակաշրջանի վերջում առ 30 հունիս 2011թ. | 13,802,404 | | 13,802,404 | 1,711,179 | 1,130,060 | | 225,652 | | 2,614,205 | 11,625,622 | | 31,109,122 | | 31,109,122 |

*Բանկի վարչության նախագահի Ժ/Պ (գործադիր տնօրեն)* — *Մանվել Սահակյան*
*Գլխավոր հաշվապահի Ժ/Պ* — *Անահիտ Գյուրջինյան*
*Հաշվետվության վավերացման ամսաթիվը 14.07.2011թ*

**«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ»**

# Աբաս Քիառոսթամի «Վավերացված պատճեն» ֆիլմով բացվեց փառատոնը

«**Ազգ**»-ը տեղեկացրել էր, որ «Ոսկե ծիրան» միջազգային 8-րդ կինոփառատոնի բացմանը ցուցադրվեց «Վավերացված պատճեն» ֆիլմը: Երեկ լրագրողների հետ հանդիպեց ֆիլմի պարսիկ ռեժիսոր **Աբաս Քիառոսթամին** ու հետաքրքրվեց, թե ինչ տպավորություն է թողել ֆիլմը: Ասենք, որ Քիառոսթամին արդեն երրորդ անգամն է մասնակցում «Ոսկե ծիրան» փառատոնին եւ ընդամենը երկու հայկական ֆիլմ է կարողացել տեսնել: «Իսկ Հարություն Խաչատրյանի «Սահման» ֆիլմը պարզապես հրաշալի է, եւ ես այդ մասին ամեն տեղ ասում եմ», ահա այսպես պատասխանեց «**Ազգ**»-ի հարցին պարսիկ հանրահայտ ռեժիսորը, որն 50-ից ավելի ֆիլմեր է նկարել, արժանացել բազմաթիվ մրցանակների: Ռեժիսորը նաեւ տպավորված էր, որ ընդամենը մեկ գործող կինոթատրոն ունեցող Երեւանն իր ֆիլմի ցուցադրության ժամանակ ոտքի կանգնած էին անգամ դիտում. դա պարզապես հրաշք է... Ձեր փառատոնի նպատակը հենց այդ է, որ ամրացվի պետության աջակցությունը, որից էլ կամրանա կապը կինոյի եւ հանդիսատեսի միջեւ: Ռեժիսորը լսելով լրագրողների կարծիքը, ի վերջո ասաց, որ ֆիլմի հերոսներն ամուսիններ են եւ 15 տարվա ընդմիջումից հետո հանդիպել ու վերհիշել են անցած-գնացած օրերը: Այդ փաստը շատերին էր հետաքրքրում, քանզի ռեժիսորը այնպես էր դա ներկայացրել ֆիլմում, որ տարակուսանք էր առաջացրել դիտողների շրջանում: Այժմ Աբաս Քիառոսթամին ճապոնիայում իր նոր ֆիլմն է նկարահանում, որը սիրային եռանկյունի է ներկայացնում:

ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ

## ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ

ՀՀ բնապահպանության նախարարության կողմից ՀՀ ջրային օրենսգրքի եւ ՀՀ կառավարության 07.03.03 թ. N 217-Ն եւ N 218-Ն որոշումների պահանջների համաձայն, մշակվում է «Ասինտար» ՍՊԸ-ի կողմից, ՀՀ Լոռու մարզի Կաթնառաս համայնքի վարչական տարածքում Ձորագետ գետի վրա կառուցվող «Ձորագետ-4» ՓՀԷԿ-ի ջրօգտագործման թույլտվության նախագիծը:

Բոլոր շահագրգիռ անձինք, ովքեր կցանկանան ծանոթանալ փաստաթղթի նախագծի նախնական տարբերակին, կարող են աշխատանքային օրերին ժամը 17-18-ը դիմել ՀՀ բնապահպանության նախարարություն (հասցեն՝ Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ):

Հասարակայնության կողմից փաստաթղթի նախնական տարբերակի լսումը տեղի կունենա 2011 թ. հուլիսի 21-ին, ժամը 16.00-ին Կառավարական 3-րդ տուն, 5-րդ հարկ, 541 սենյակ:

***ՀՀ բնապահպանության նախարարություն***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

**Հայտարարության սույն տեքստը հաստատված է հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 1-ի թիվ 1 որոշմամբ եւ հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի համաձայն**

Պարզեցված ընթացակարգի ծածկագիրը՝ «ՊՄԱԹ ՊՄՊ ՊԸԱՊՁԲ 11/01»

Պատվիրատուն՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ը, որը գտնվում է ք.Երեւան, Թաիրովի 15 հասցեում, հայտարարում է պարզեցված ընթացակարգով գնում:

Պարզեցված ընթացակարգի գնման հաղթող ճանաչված մասնակցին, սահմանված կարգով կառաջարկվի կնքել «Ավտոմեքենայի ձեռքբերման» գնման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

Գնման առարկա է հանդիսանալու «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի կարիքների համար Միցուբիշի «PAJERO IO» մակնիշի կամ համարժեք մարդատար ավտոմեքենայի ձեռքբերումը:

Կնքվելիք պայմանագրի գործողության ժամկետը սահմանվում է մինչեւ 2011թ. օգոստոսի 20-ը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6 հոդվածի պայմանների համաձայն, գնումներին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են մասնակցել մրցույթին անկախ նրանց՝ օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն, քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման պահանջներին:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային տարբերակով ստանալու համար անհրաժեշտ է դիմել Պատվիրատուին մինչեւ սույն հայտարարությունը գնումների տեղեկագրում հրապարակելու օրվանից հաշված 8-րդ օրացուցային օրը, ժամը 12:00-ն:

Պարզեցված ընթացակարգի հրավերը թղթային տարբերակով տրամադրելու համար պահանջվում է վճար՝ 500 ՀՀ դրամ գումարի չափով, որը պետք է փոխանցվի «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ, 163008140325 հաշվեհամարին: Պատվիրատուն պարտավորվում է պահանջվող վճարի անդորրագիրը ներկայացնելու օրվա ընթացքում պարզեցված ընթացակարգի հրավերը տրամադրել նման պահանջ ներկայացրած անձին:

Պարզեցված ընթացակարգի հայտերն անհրաժեշտ է ներկայացնել «Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, քաղաք Երեւան, Թաիրովի 15 հասցեով, գնահատող հանձնաժողովի քարտուղար Ա. Ավետիսյանին, մինչեւ սույն հայտարարությունը հրապարակվելու պահից հաշված 10-րդ օրացուցային օրվա ժամը 12:00-ը եւ դրանք պետք է կազմված լինեն հայերեն լեզվով: Հայտերը բացվում են հրավերում նշված պահին հայտերի բացման նիստում հայտերի ներկայացման վերջնաժամկետում:

Պարզեցված ընթացակարգի հաղթող կճանաչվի Մասնակիցների բավարար գնահատված հայտերով՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած Մասնակիցը:

Մասնակիցների որակավորման տվյալների՝ պարզեցված ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխանությունը գնահատելու համար, Մասնակիցները պետք է Պատվիրատուին ներկայացնեն պարզեցված ընթացակարգի հրավերով նախատեսված փաստաթղթեր:

Պարզեցված ընթացակարգի վերաբերյալ բողոքները ներկայացվում են Գնումների աջակցման կենտրոն՝ ք. Երեւան, Կոմիտասի 54/բ հասցեով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետում՝ 5 օրացուցային օրվա ընթացքում:

***Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն***
***«Պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ***

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՀՀ, ք. Երեւան, Դեղատան 6 հասցեում գտնվող եռահարկ վարչական շենքի 2-րդ եւ 3-րդ հարկերում վարձակալությամբ տրվում են գրասենյակային տարածքներ:**

Վարձակալությամբ տրվող անշարժ գույքի ընդհանուր մակերեսը կազմում է.

2-րդ հարկ՝ 272,3 քմ (ներառյալ պատշգամբ՝ 8 քմ)

3-րդ հարկ՝ 279,9 քմ

▼ Շենքը եռահարկ քարե շենք է, հանձնված է շահագործման 2004թ.:
▼ Շենքի դիմացի եւ կողքի հատվածներում առկա են ավտոկայանատեղիներ:
▼ Շենքի նկուղում եւ 1-ին հարկում տեղակայված է «Ամերիաբանկ» ՓԲԸ-ն:
▼ Շենքն ապահովված է օդափոխության ժամանակակից համակարգով:
▼ Շենքն ապահոված է շուրջօրյա ջրամատակարարմամբ:
▼ Շենքն ապահովված է հակահրդեհային պաշտպանության համակարգով:
▼ Շենքի 2-րդ եւ 3-րդ հարկերում առկա են առանձին սանհանգույցներ եւ խոհանոցներ:
▼ Շենքը շուրջօրյա հսկվում է ոստիկանության պահպանության ծառայության կողմից:

Առաջարկով հետաքրքրված լինելու դեպքում կամ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել

*091 232335 հեռախոսահամարով:*

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերտություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Ֆինանսական արդյունքների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Հունիսի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա նույն ժամանակաշրջան | Հաշվետու տարվա սկզբից մինչեւ հաշվետու ամսաթիվը | Նախորդ տարվա սկզբից մինչեւ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանը |
|---|---|---|---|---|
| Տոկոսային եւ նմանատիպ եկամուտներ | 310,523 | 430 | 575,152 | 430 |
| Տոկոսային եւ նմանատիպ ծախսեր | (6,693) | - | (6,693) | - |
| Զուտ տոկոսային եկամուտ | 303,830 | 430 | 568,459 | 430 |
| Արտարժութային գործարքներից ստացված զուտ շահույթ/(վնաս) | 118 | - | 129 | - |
| Այլ գործառնական եկամուտներ | 45,761 | - | 107,615 | - |
| Այլ գործառնական ծախսեր | (3,855) | - | (6,883) | - |
| Անտոկոս փոխառության զեղչումից եկամուտ | 16,206 | - | 1,285,769 | - |
| Զուտ կոմիսիոն եւ այլ եկամուտ | 362,060 | 430 | 1,955,089 | 430 |
| Վարկերից եւ այլ փոխառություններից առաջացած կորուստներ | (32,767) | (1,802) | (234,467) | (1,802) |
| Ընդհանուր վարչական ծախսեր | (107,001) | - | (228,826) | - |
| Շահույթ մինչեւ հարկումը | 222,292 | (1,372) | 1,491,796 | (1,372) |
| Շահութահարկի գծով ծախս (փոխհատուցում) | 16,941 | - | 16,451 | - |
| Ժամանակաշրջանի Շահույթ | 205,351 | (1,372) | 1,475,345 | (1,372) |

**Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան** **Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան**

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերտություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Ֆինանսական վիճակի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Հունիսի 30 դրությամբ**

*Հազար ՀՀ դրամ*

| | | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ տարվա վերջ |
|---|---|---|---|
| 1 | Ակտիվներ | | |
| | Դրամական միջոցներ եւ բանկային հաշիվներ | 313,799 | 458,885 |
| | Բանկերում տեղաբաշխված միջոցներ | 644,189 | - |
| | Հաճախորդներին տրված վարկեր եւ այլ փոխատվություններ | 3,101,138 | 2,407,608 |
| | Հիմնական միջոցներ եւ ոչ նյութական ակտիվներ | 34,603 | 7,752 |
| | Ստացվելիք տոկոսներ | 33,726 | 22,449 |
| | Այլ ակտիվներ | 7,721 | 2,201 |
| | Ընդամենը՝ ակտիվներ | 4,135,176 | 2,898,895 |
| 2 | Պարտավորություններ | | |
| | Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ | 442,632 | 181,078 |
| | Հաճախորդներից ստացված փոխառություններ | 1,059,562 | - |
| | Հետաձգված հարկային պարտավորություններ | 294 | 823 |
| | Վճարվելիք տոկոսներ | 6,599 | - |
| | Այլ պարտավորություններ | 125,166 | 2,011,416 |
| | Ընդամենը պարտավորություններ | 1,634,253 | 2,193,317 |
| 3 | Կապիտալ | | |
| | Կանոնադրական կապիտալ | 500,000 | 180,000 |
| | Կուտակված շահույթ | 2,000,923 | 525,578 |
| | Ընդամենը կապիտալ | 2,500,923 | 705,578 |
| | Ընդամենը պարտավորություններ եւ կապիտալ | 4,135,176 | 2,898,895 |

**Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան** **Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան**

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերտություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Դրամական միջոցների հոսքերի մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Հունիսի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Հաշվետու ժամանակաշրջան | Նախորդ ժամանակաշրջան |
|---|---|---|
| 1. Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական գործունեությունից | (691,306) | 430 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր մինչեւ գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխությունը | 412,763 | 430 |
| Ստացված տոկոսներ | 556,389 | 430 |
| Վճարված տոկոսներ | - | - |
| Ստացված զուտ կոմիսիոն եւ նմանատիպ գումարներ | 105,987 | - |
| Ստացված տույժեր եւ տուգանքներ | 1,586 | |
| Վճարված աշխատավարձ եւ դրան հավասարեցված այլ վճարումներ | (126,319) | - |
| Վճարված հարկեր | (124,880) | |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր գործառնական ակտիվների եւ պարտավորությունների փոփոխություններից | (1,104,069) | - |
| Հաճախորդներին տրամադրված վարկերի նվազում (ավելացում) | (1,577,416) | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ գործառնական գործունեությունից | 473,347 | - |
| 2. Դրամական միջոցների զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից | (32,724) | (277) |
| Մինչեւ մարման ժամկետը պահվող ներդրումների նվազում (ավելացում) | - | |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (32,724) | (277) |
| Հիմնական միջոցների եւ ոչ նյութական ակտիվների օտարում | - | - |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ներդրումային գործունեությունից | - | - |
| 3. Դրամական միջոցների զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից | 580,984 | 180,000 |
| Վճարված շահաբաժիններ | - | |
| Բանկերից ստացված վարկերի ավելացում (նվազում) | - | |
| Այլ փոխատուներից ստացված փոխառությունների ավելացում (նվազում) | 580,984 | |
| Բաժնետերերի ներդրումները կանոնադրական հիմնադրամում | - | 180,000 |
| Դրամական միջոցների զուտ հոսքեր այլ ֆինանսական գործունեությունից | - | |
| Արտարժույթի փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների եւ դրանց համարժեքների վրա | (2,040) | |
| Դրամական միջոցների զուտ հոսք | (145,086) | 180,153 |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի սկզբում | 458,885 | - |
| Դրամական միջոցներ եւ դրանց համարժեքներ ժամանակաշրջանի վերջում | 313,799 | 180,153 |

**Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան** **Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան**

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերտություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Հիմնական տնտեսական նորմատիվների վերաբերյալ հաշվետվություն**
**2011թ. Հունիսի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| Նորմատիվներ | Փաստացի | Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի սահմանած նորմատիվի թույլատրելի մեծությունը մեծությունը | Հաշվետու եռամսյակում խախտումների թիվը |
|---|---|---|---|
| Վարկային կազմակերպության կանոնադրական կապիտալի նվազագույն չափը | 500,000 | 150,000 | խախտում առկա չէ |
| Ընդհանուր (սեփական) կապիտալի նվազագույն չափը | 2,154,625 | 150,000 | խախտում առկա չէ |

"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերտություն ՍՊ ընկերությունը իր կանոնադրության համաձայն հրապարակային օֆերտայի միջոցով փոխառություններ չի ներգրավում, հետեւաբար մնացած հիմնական տնտեսական նորմատիվները "Կամուրջ" ՈւՎԿ ՍՊԸ վրա չեն տարածվում:

**Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան** **Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան**

**"Կամուրջ" Ունիվերսալ Վարկային Կազմակերտություն ՍՊԸ, ք.Երեւան, Կալենցի 11**
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին միջանկյալ հաշվետվություն**
**2011թ. Հունիսի 30**

*Հազար ՀՀ դրամ*

| | Կանոնադրական կապիտալ: Կանոնադրական կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Հետ գնված կապիտալ | Կանոնադրական կապիտալ: Զուտ գումարը | Չբաշխված շահույթ/վնաս | Ընդամենը | Չվերահսկվող բաժնեմաս | Ընդամենը կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|---|
| *Նախորդ ժամանակաշրջան* | | | | | | | |
| Մնացորդը առ 2009թ. Դեկտեմբերի 31 | | | | | | | |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 180,000 | | | | 180,000 | | 180,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 180,000 | | | | 180,000 | | 180,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 525,578 | 525,578 | | 525,578 |
| Շահութաբաժիններ | | | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | | | 525,578 | 525,578 | | 705,578 |
| *Հաշվետու ժամանակաշրջան* | | | | | | | |
| Մնացորդը առ 2010թ. Դեկտեմբերի 31 | 180,000 | | | 525,578 | 525,578 | | 705,578 |
| Բաժնետերերի (սեփականատերերի) հետ գործարքներ բաժնետոմսերի (բաժնեմասերի) գծով, այդ թվում՝ | 320,000 | | | | 320,000 | | 320,000 |
| Ներդրումներ կանոնադրական կապիտալում եւ կանոնադրական կապիտալի այլ աճ | 320,000 | | | | 320,000 | | 320,000 |
| Կանոնադրական կապիտալի նվազում, այդ թվում՝ հետ գնված եւ շրջանառությունից հանված բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) հաշվին | | | | | | | |
| Համապարփակ եկամուտ | | | | 1,475,345 | 1,475,345 | | 1,475,345 |
| Շահութաբաժիններ | | | | | | | |
| Մնացորդը առ 2011թ. Հունիսի 30 | 500,000 | | | 2,000,923 | 2,320,923 | | 2,500,923 |

**Գործադիր տնօրեն՝ Գ. Վարդանյան** **Գլխավոր հաշվապահ՝ Ա. Սահակյան**

**Ծանոթություն.** «Կամուրջ ՈւՎԿ» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող սպառողական վարկերը տրամադրվում են խմբային երաշխավորությամբ, հետեւյալ պայմաններով. խմբի անդամների քանակ՝ 3 - 15 անդամ, ժամկետ՝ 3 - 18 ամիս, վարկի գումար՝ 50,000դր. - 1,200,000 ՀՀ դրամ, տարեկան տոկոսադրույք՝ 22% - 24% (կախված վարկավորման փուլից, հաշվարկվում է վարկի մնացորդային գումարի նկատմամբ), վարկի/կանխիկի տրամադրման վճար՝ 2% - 3%, սպասարկման ամսական վճար՝ 0.6% - 1%, տուժանք՝ օրական 1% (առավելագույնը 30 օրացուցային օր):

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 14.7.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: